



Գ Լ Ո Ր Ո Ւ Մ



*Հրատարակվում է
«ՀայՆուսգասարդ» ՓԲԸ աջակցությամբ*

Հատուկ թողարկում

10 (43)

ԵՐԵՎԱՆ

2013

ԳԼՈՒԲՈՒՍ

Թիվ 10 (43), 2013

«ԳԼՈՒԲՈՒՍ» ՏԵՂԵԿԱԳՐԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Աշոտ Թավադյան

ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների
ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Աշոտ Թևիկյան

ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների
և Ռուս-հայկական (սլավոնական)
համալսարանի կառավարման ամբիոնների
դասախոս, տ.գ.թ.

Գագիկ Հարությունյան (համակարգող)

«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Էդուարդ Լ. Դանիելյան

«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, պ.գ.դ.

Կարեն Վ. Կարապետյան

Տնտեսագիտության դոկտոր

Մուշեղ Լալայան

ՀՀԿ փոխնախագահ

Մևակ Մարտիրոսյան

«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, ք.գ.թ.

Վարդան Հարությունյան

«Հայհուսգագարդ» ՓԲԸ վարչության
նախագահ-գլխավոր տնօրեն, տ.գ.թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր

Գագիկ Հարությունյան

Գլխավոր խմբագրի տեղակալ
Մևակ Մարտիրոսյան

Պատասխանատու խմբագիր
Խոնարհիկ Քարաուղլանյան

Պատասխանատու քարտուղար
Լուսինե Բաղրամյան

Խմբագիրներ

Աննա Ժամակոչյան

Արեստակես Միրավորյան

Դիանա Գալստյան

Սերգեյ Սարգսյան

Տիգրան Հարությունյան

Տիգրան Ղանալանյան

Էջաղրող-ձևավորող

Տաթևիկ Քարաուղլանյան

ԳԼՈՒԲՈՒՄ

Թիվ 10 (43), 2013

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<i>Նախաբան</i>	5
<i>Վահե Մարգարյան</i> Հայերը Գորիի գավառում և սահմանակից շրջաններում	7
<i>Հուշագիր հեղինակին</i>	69

ՆԱԽԱԲԱՆ

Հայտնի է, որ հայերը հնուց ի վեր կազմել են Վրաստանի բնակչության զգալի հատվածը: Հայերի թիվը մասնավորապես աճել է արաբական տիրապետության շրջանում (VII-IXդդ.), այնուհետև՝ թուրք-սելջուկների արշավանքների հետևանքով և հատկապես վրաց թագավոր Դավիթ Շինարարի (1089-1125թթ.) և Թամար թագուհու (1184-1209թթ.) օրոք: Վերջիններիս եռանդուն գործունեության շնորհիվ հզորացած Վրաստանում ապաստան գտան մեծ թվով հայեր: Վրաց թագավոր Դավիթ Շինարարը սիրով էր ընդունում հայ առևտրականներին ու արհեստավորներին: Արքունիքը նրանց բնակեցնում էր խոշոր քաղաքներում՝ նպաստելու համար հյուսիսային առևտրական մայրուղիների աշխուժացմանն ու քաղաքային արհեստների զարգացմանը: Վրաց հողատեր-կալվածատերերն էլ իրենց հերթին էին շահագրգռված, որ Թիֆլիսի արվարձաններում բնակեցնեն հայ աշխատասեր գյուղացի-հողագործներին:

Սակայն Վրաստանի հայությանը, ինչպես և Հայրենիքից դուրս ապրող ցանկացած էթնիկ հանրույթի, մշտապես սպառնացել է ազգային ինքնության կորստի վտանգը: Պատմական փորձը ցույց է տալիս, որ վիրահայության աստիճանական փոշիացումը հիմնականում իրականացվել է լեզվական ձուլման ճանապարհով: Տեղի հայությունը, հրաժարվելով մայրենի լեզվից, հետզհետե անցել է վրացախոսության և կորցրել նաև ազգային ինքնագիտակցությունը: Վրացացման գործընթացները հատկապես բարձր տեմպերի հասան XXդ., և հայերի թվաքանակը զգալի անկում ապրեց: Եթե 1926թ. հայությունը կազմում էր Վրացական ԽՍՀ բնակչության 11,5%-ը, 1959թ.՝ 10,9%-ը, 1989թ.՝ 8 %-ը, ապա 2002թ. մարդահամարի տվյալներով՝ ընդամենը 5.7%-ը:

Վրաստանի վրացացած հայերին առնչվող խնդիրների վերաբերյալ համապարփակ և բազմակողմանի ուսումնասիրություններ մեզանում դեռևս չեն իրականացվել: Ուստի, պ.գ.թ. Վահե Սարգսյանի «Հայերը Գորիի գավառում և սահմանակից շրջաններում» աշխատությունը լուրջ ներդրում է նշված խնդրի ուսումնասիրման ուղղությամբ: Աղբյուրագիտական արժեքավոր նյութերի հիման վրա հեղինակին հաջողվել է վեր հանել գավառի և հարակից բնակավայրերի հայությանն առնչվող բազմաթիվ պատմա-ազգաբանական ու քաղաքագիտական նշանակություն ունեցող հարցեր. ներկայացված են ժողովրդագրական պատկերը, հասարակական-քաղաքական, մշակութային կյանքը, ինչպես նաև գորիահայտության վրացացման պատմական փորձից ելնելով՝ արժեքավոր ամփոփումներ են արված, որոնք կարող են օգտակար լինել ներկայումս ջավախահայտությանն սպառնացող ազգային ինքնության փոփոխության վտանգների առումով: Այնուամենայնիվ, ջավախահայտությունն ապրում է իր պատմական Հայրենիքում, և այս հիմնաքարային գործոնը, անշուշտ, դեռևս շարունակում է մնալ էթնոձուլման հզոր գործընթացներից հակադրվելու ներուժի հիմնական աղբյուրը:

*Թամարա Վարդանյան, պ.գ.թ.,
«Նորավանք» ԳԿՀ փորձագետ*

ՀԱՅԵՐԸ ԳՈՐԻԻ ԳԱՎԱՌՈՒՄ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԿԻՑ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

*Վահե Սարգսյան**

Պատմական անցյալից

Թիֆլիսից 76 կմ հյուսիս-արևմուտք գտնվող պատմական Գորի քաղաքում, համանուն գավառում և վերջինիս հարակից բնակավայրերում, ինչպես ներկա Վրաստանի այլ վայրերում, հայությունն ունեցել է հոծ ներկայություն, թողել իր պատմական հետագիծը:

Պատմիչ Մ.Ուռհայեցու վկայությամբ, Գոռա (Գորի) քաղաքը և հարակից գյուղերը հիմնադրել է վրաց Դավիթ Դ Շինարար թագավորը (1089-1125թթ.): Այդ նույն ժամանակ Անիից և շրջակա գյուղերից այստեղ են տեղափոխվում մեծ թվով հայեր. *«[Դավիթը] Վրաստանում հայերի համար քաղաք կառուցեց, որտեղ բազմաթիվ եկեղեցիներ և վանքեր հիմնադրեց: Այդ քաղաքը նա Գոռա կոչեց»*¹: Այսպիսով, Գորիի հետագա դարերի պատմությունը շաղկապված է պետականությունը կորցրած հայության երբեմնի ծաղկուն մայրաքաղաք Անիի և հարակից բնակավայրերի հայության կյանքում տեղի ունեցած իրադարձությունների հետ: Պահպանված ոչ այնքան հարուստ տեղեկություններից մեկում, որտեղ նկարագրվում է օտար նվաճողների դեմ գորեցիների պայքարը, վկայակոչված է հայ հոգևորական Թեոդորի անձնուրացությունը. 1609թ., երբ Ղրիմի տիրակալ Թաթարխանը վերադառնում էր Բաղդադ կատարած արշավանքից, Թեոդոր քահանան, սխալ ճանապարհ ցույց տալով, Խրամ գետի կիրճերում և

* Պատմական գիտությունների թեկնածու:

¹ *Մատթեոս Ուռհայեցի*, Ժամանակագրություն, Ե., 1973, էջ 239:

Թռեղքի լեռներում մուրեցնում է նրա գորքը՝ ցանկանալով փրկել Լուարսաբ II թագավորին և հնարավորություն տալ վերջինիս նախապատրաստվելու հակահարձակման, իսկ երբ Թաթարխանն անտառի միջով մոտենում է Գորի քաղաքին, նույն քահանան արագ տեղեկացնում է այդ մասին և կազմակերպում կամրջի քանդումը: Չկարողանալով մտնել Գորի՝ Թաթարխանի գորքն այնուհետև Բորժումի կիրճերում ջախջախվում է Լուարսաբ II-ի գորքերի կողմից²: Գորիի հայության մասին որոշակի կցկտուր տեղեկություններ կան 18-րդ դ. վրաց պատմագիր և աշխարհագիր, Վախթանգ VI թագավորի որդի Վախուշտիի թողած աշխատություններում. *«Եկեղեցիները հիանալի են, միայն մեկը՝ հայկականը, կործանեցին օսմանները: ...Բնակիչները կազմում են վրացիները և հայերը՝ տեսքով, վայելչակազմ, գեղեցիկ, հպարտ և խոսքին լավ տիրապետող»*³: Գորիի հայության մասին հպանցիկ տեղեկություն է թողել նաև 19-րդ դարի եվրոպացի ճանապարհորդ Կլապրոտն իր *«Ճանապարհորդություն լեռնային Կովկասում և Վրաստանով»* գրքում. *«Թիֆլիսից հետո Գորին Վրաստանի ամենանշանակալի քաղաքն է: Նրանում հաշվվում է մոտավորապես 300 տուն... Քաղաքի բնակիչները վրացիներ են և հայեր»*⁴:

1801թ., ռուսական տիրապետության տակ, Գորիին տրվեց քաղաքի կարգավիճակ⁵, նույն թվականին ձևավորվեց համանուն գավառը, որն սկզբում մտցվեց դարձյալ նույն թվականին ձևավորված Վրացական նահանգի (1801-10.IV.1840թթ.), այնուհետև՝ Վրացա-իմերեթական (10.IV.1840-14.XII.1846թթ.), իսկ 1846 թվականից՝ Թիֆլիսի նահանգի մեջ: 1859թ. Գորիի գավառին միացվեց Օսական շրջանը

² Джанашивили М., Гори и его окрестности, Сборник материалов для описания местностей и племен Кавказа, выпуск XXXIV, Тифлис, 1904, отд. I, с. 170.

³ Նույն տեղում, էջ 165-166, տես նաև՝ *Բուխնիկաշվիլի Գ.*, Գորի, պատմական ակնարկ, Երևան, 1940, էջ 24: Չնայած Բուխնիկաշվիլու համար ջանքերին՝ քաղաքի պատմության մեջ չհիշատակել հայկական հետքը, այդուհանդերձ, վերջինիս բերած զանազան աղբյուրագիտական նյութերում առկա են հայերի մասին մի շարք հիշատակություններ:

⁴ *Բուխնիկաշվիլի Գ.*, նշվ. աշխ., էջ 50-51:

⁵ Джавахов А., Город Гори, Сборник материалов для описания местностей и племен Кавказа, выпуск II, Тифлис, 1882, отд. I, с. 62.

(օկրուզ, ձևավորվել է 1842-43թթ.): 1876թ. Գորիում բացվում է Քաղաքային Դուման, 1877թ.՝ Քաղքենիական վարչությունը: Գորիի գավառը Թիֆլիսի նահանգի մեջ մտնող 9 գավառներից և 1 օկրուզից (Զաքաթալա) տարածքով ամենախոշորն էր:

Ազգաբնակչությունը

Գորին եղել է նահանգի ամենաբազմամարդ գավառներից մեկը, իսկ 1886թ. տվյալներով՝ ամենաբազմամարդըր.

Գորիի գավառ (քաղաքով հանդերձ)	1886թ. ⁶	1897թ. ⁷	1914թ. ⁸	1886-1897թթ. աճը	1897-1914թթ. աճը	1886-1914թթ. աճը
	180.194	191.091	235.614	6,05 %	23,35 %	30,75 %

Գորի քաղաքը նույնպես բազմամարդ էր և 1914թ. դրությամբ Թիֆլիսից հետո 2-րդ բազմամարդ քաղաքն էր.

Գորի քաղ.	1886թ. ⁹	1897թ. ¹⁰	1914թ. ¹¹	1886-1897թթ. աճը	1897-1914թթ. աճը	1886-1914թթ. աճը
	7.243	10.269	25.655	29,47 %	149,83 %	254,20 %

Խնդիրը բավական բարդանում է, երբ փորձում ենք տարբեր տարիների համար վեր հանել Գորիի գավառի ժողովրդագրական պատկերն առանձին ժողովուրդների օրինակով: Այսպես, ըստ մեր կողմից համադրված պաշտոնական վիճակագրության՝ գավառի հայության թվաքանակի պատկերը հետևյալն էր.

⁶ Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886 г., Тифлис, 1893. Ստվարածավալ հատորը, ցավոք, չի էջակվված:

⁷ Первая всеобщая перепись населения Российской Империи, 1897 г., издание ЦСК МВД, LХІХ. Тифлисская Губерния, С.Пб., 1905, с. 1-2.

⁸ Кавказский календарь на 1915 г., Тифлис, 1914, с. 245.

⁹ Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886 г., Тифлис, 1893.

¹⁰ Первая всеобщая перепись населения Российской Империи, 1897 г., издание ЦСК МВД, LХІХ. Тифлисская Губерния, С.Пб., 1905, с. 1-2.

¹¹ Кавказский календарь на 1915 г., Тифлис, 1914, с. 245.

Գորիի գավառ	1886թ. ¹²	1897թ. ¹³	1914թ. ¹⁴	1917թ. ¹⁵
հայեր	18.041 ¹⁶	7.686	24.942	32.822

Ինչպես երևում է բերված թվերից, գավառի հայության թվաքանակի՝ 1897թ. տվյալը խիստ տարօրինակ թիվ է. գրեթե բացառվում է, որ, եթե չեն եղել բնական կամ այլ աղետներ, հայության տեսակարար կշիռը 10 տարում ունենա նման խիստ անկում, իսկ հաջորդ մեկ և կես տասնամյակում՝ նման կտրուկ վերելք: Տոկոսային ցուցանիշներով պատկերը կունենա հետևյալ տեսքը¹⁷.

Հայերի տոկոսային աճը Գորիի գավառում	1886-1897 թթ.	1897-1914 թթ.	
	-133,30 %	224,25 %	38,14 %

Թվային այս անհասկանալի տատանումների վրա լույս է սփռվում, երբ առավել մանրակրկիտ ենք ծանոթանում 1897թ. համառուսաստանյան առաջին մարդահամարի անցկացման ձևին ու հրատարակված այլ ցուցանիշների: Բանն այն է, որ 1897թ. մարդահամարի ժամանակ ժողովուրդների խմբավորման համար հաշվի է առնվել

¹² Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886г., Тифлис, 1893.

¹³ Первая всеобщая перепись населения Российской Империи, 1897г., издание ЦСК МВД, LХІХ. Тифлисская Губерния, С.Пб., 1905, с. 3.

¹⁴ Кавказский календарь на 1915 г., Тифлис, 1914, с. 242-245.

¹⁵ Кавказский календарь на 1917 г., Тифлис, 1916, с. 206-207, 210-211.

¹⁶ Հայերի (լուսավորչական, կաթոլիկ) 18.041 թիվը 1886թ. տեղեկագրքի՝ դավանանքային պատկանելությունը մատնանշող բաժնում ավելանում է 166-ով և կազմում 18207: Նույնը, օրինակ, տեղի է ունենում Ախալցխայի գավառի պարագայում՝ հայերի թիվը նշվում է 15042, իսկ նշյալ բաժնում այդ թիվն ավելանում է 2174-ով և կազմում 17216:

¹⁷ Նշենք, որ նույն տարօրինակությունը տարածվում է նաև, բացի Գորիի գավառից, Թիֆլիսի նահանգի ևս 3 գավառների հայության ցուցանիշների վրա. Դուշեթի, Սղնախի և Թելավի, որոնցից առաջինում 1886-1897թթ. հայության թիվը նվազել է 2352-ով, 2-րդում՝ 3675-ով, 3-րդում՝ 7857-ով: Այս թվերի կասկածելիությունը ի հայտ է գալիս միանգամից, եթե մենք բերում ենք նույն այս գավառների հայության աճը հաջորդ՝ 1897-1914թթ. Դուշեթում հայերն աճել են 7972-ով, Սղնախում՝ 8134-ով, Թելավում՝ 4653-ով, այս մասին իր արժեքավոր աշխատանքում անդրադարձել է նաև Բ. Իշխանյանը, տես՝ «Վիճակագրական ուսումնասիրությունն անդրկովկասեան ժողովուրդների, Ա մաս. ժողովուրդների տերրիտորիական բաժանումները եւ նրանց աճումը Անդրկովկասում», Բագու, 1919:

երկու հատկանիշ՝ մայրենի լեզուն և դավանանքային պատկանելությունը: Իհարկե, լեզվական կամ ազգային պատկանելությունն այստեղ ավելի առաջնային պետք է լիներ, քանի որ նույն ազգին պատկանող մարդկանց խմբերը կարող են մի շարք կրոնական ճյուղերի հետևորդներ լինել: Այս դեպքում հայության թվաքանակը գրանցել են՝ համապատասխան բաժիններում¹⁸ հավասարության նշան դնելով վերջիններիս լեզվական կամ ազգային պատկանելության և գործածած լեզվի միջև: Հետևաբար, ելնելով այն հանգամանքից, որ նշյալ փուլում հայության շրջանում գերակշռում էր վիրախոսությունը, բնական էր, որ ըստ *գործածվող* լեզվական հատկանիշներով հաշվառվող հայության թիվն անհամեմատ փոքր կլիներ հայության իրական թվից: Ահա ազգաբնակչության տեղաբաշխվածությունն ըստ դավանանքի բաժիններում¹⁹, օրինակ, Գորիի գավառի համար ունենք հետևյալ պատկերը. Հայ գրիգորյաններ՝ 19619 (16814-ը՝ գավառում, 2805-ը՝ քաղաքում), հայ կաթոլիկներ՝ 84 (76-ը՝ գավառում, 9-ը՝ քաղաքում)²⁰: Փաստորեն, 1897թ. մարդահամարի նույն աղբյուրի տվյալներով՝ 19703-ից (հայ լուսավորչականներ և հայ կաթոլիկներ) 12122-ը եղել են օտարախոս հայեր (12108-ը եղել են վիրախոս, 6-ը՝ օսախոս, 1-ը՝ պարսկախոս, 7-ը՝ ռուսախոս)²¹: Հետևաբար, հայության (լուսավորչականներ,

¹⁸ Первая всеобщая перепись населения Российской Империи, 1897г., издание ЦСК МВД, LXIX. Тифлисская Губерния, СПб., 1905, с. 2-3, 76-77, 96-97.

¹⁹ Նույն տեղում, с. 74-75, 96-97.

²⁰ Նույն տեղում, с. 74-75.

²¹ Եթե մանրամասնելու լինենք, կստացվի հետևյալը. 19703-ից 19619-ը եղել են հայ լուսավորչականներ, 84-ը՝ հայ կաթոլիկներ, նշյալ 19619 հայ լուսավորչականներից՝ 16814-ն ապրել են գավառում (այստեղից՝ 1-ը՝ մայրոսախոս, 5455-ը՝ հայախոս, 5-ը՝ օսախոս, 11352-ը՝ վիրախոս), 2805-ը՝ քաղաքում (այստեղից՝ 6-ը՝ ռուսախոս, 2046-ը՝ հայախոս, 1-ը՝ պարսկախոս, 752-ը՝ վիրախոս), 84 հայ կաթոլիկներից 76-ն ապրել են գավառում (այստեղից՝ 74-ը՝ հայախոս, 1-ը՝ օսախոս, 1-ը՝ վիրախոս), 8-ը՝ քաղաքում (այստեղից՝ 5-ը՝ հայախոս, 3-ը՝ վիրախոս): Первая всеобщая перепись населения Российской Империи, 1897г., издание ЦСК МВД, LXIX. Тифлисская Губерния, СПб., 1905, с. 96-97. Աղբյուրի սույն բաժնում, կապված ըստ դավանանքի և ըստ մայրենի լեզվի հայության թվաքանակի հետ, մի փոքր թվային անհամապատասխանություն կա. 19703 կազմող հայ լուսավորչականների և հայ կաթոլիկների թվից եթե հանում ենք 12122 օտարախոս հայերի թիվը, մնացորդը (այն է՝ հայերի թիվն ըստ մայրենի լեզվի) կազմում է ոչ թե 7686 (ինչպես նշված է այլ բաժիններում), այլ՝ 7580:

կաթոլիկներ) իրական թիվը քննարկվող գավառում (քաղաքով հանդերձ) 1897թ. եղել է ոչ թե 7686, այլ՝ 19703: Բնականաբար, 1897թ. վիճակագրության այս կոպիտ սխալի արդյունքում նույն կերպ արհեստականորեն նվազել են նաև Թիֆլիսի նահանգի գրեթե բոլոր՝ Թիֆլիսի, Ախալքալաքի, Ախալցխայի, Բորչալուի, Գորիի, Դուշեթի, Թիոնեթի, Սղնախի, Թելավի գավառների հայության ցուցանիշները. նշյալ հողի վրա հայության արհեստական նվազման թիվը բոլոր գավառները միասին կազմում էր 34145²²: Հետևաբար, 1897թ. Թիֆլիսի նահանգում հայության թիվը կազմել է ոչ թե 196189 (ըստ գործածության լեզվի), այլ՝ 196189 + 34145, այսինքն՝ 230334: Անշուշտ, հայության նվազեցված նշյալ թիվը, որը գրեթե ամբողջությամբ կազմել են վիրախոսները, ավելացված է (քարթվելների) վրացիների թվին:

1897թ. ռուսական վիճակագիրների նշյալ սխալի արդյունքում արմատապես փոխվում են նաև Անդրկովկասի մի շարք գավառների հայության տոկոսային աճին և մի շարք այլ ցուցանիշներին վերաբերող հաշվարկային թվերը: Այսպես, 1886-1897թթ. Գորիի գավառի հայերի թիվը ոչ միայն չի նվազել 133,30%-ով, այլև, ընդհակառակը, աճել է 9,21%-ով, իսկ հաջորդ՝ 1897-1914թթ. փուլում աճը տեղի է ունեցել ոչ թե 224,25%-ով, այլ՝ 26,50 %-ով: Ցավալի այս իրողությունը տարածվել է նաև ինչպես մի շարք քաղաքների, այնպես էլ Գորիի վրա: Գորի քաղաքը նշյալ տարիներին ուներ հետևյալ ժողովրդագրական պատկերը.

²² Первая всеобщая перепись населения Российской Империи, 1897г., издание ЦСК МВД, LIX. Тифлисская Губерния, СПб., 1905, տես՝ ժողովուրդների ըստ կրոնական համոզմունքի և լեզվական պատկանելության դասակարգման համապատասխան բաժինները, հմմտ.՝ *Բշխանեան Բ.*, նշվ. աշխ., էջ 91-93:

Գործի քաղ.	1886թ. ²³				1897թ. ²⁴				1914թ. ²⁵			
	ռուս	հայ	վր.	մսհմ.	ռուս	հայ	վր.	մսհմ.	ռուս	հայ	վր.	մսհմ.
	373	2894	3874	4	1322	2084	6.208	105	1723	6.888	16.797	75

Այստեղ ևս ճշտենք, որ Գործի քաղաքի հայության 2.084 թիվը (1897թ.) նույնպես չի համապատասխանում իրականությանը: Իրական թիվն է 2.813-ը (հայ լուսավորչականներ և հայ կաթոլիկներ)²⁶:

Գործի ժողովրդագրական պատկերը 1917թ. դրությամբ հետևյալն էր²⁷.

Գործի քաղաք	1917թ.			
	ռուս	հայ	վր.	մուս.
	1.377	7.270	9.580	58

Գործի քաղաքի հայությունը 1186, 1897, 1914, 1917 թվականների դրությամբ այլ ժողովուրդների հետ գտնվել է հետևյալ տոկոսային հարաբերակցության մեջ.

Գործի քաղ.	1886թ. ²⁸				1897թ.				1914թ. ²⁹			
	ռուս.	հայ.	վր.	մուս.	ռուս.	հայ.	վր.	մուս.	ռուս.	հայ.	վր.	մուս.
	5,15 %	40,00 %	53,50 %	---	12,87 %	20,30 %	60,44 %	1,44 %	6,71 %	26,85 %	65,43 %	0,30 %

²³ Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886г., Тифлис, 1893.

²⁴ Первая всеобщая перепись населения Российской Империи, 1897г., издание ЦСК МВД, LXIX. Тифлисская Губерния, СПб., 1905, с. 74-81.

²⁵ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 242-245.

²⁶ Первая всеобщая перепись населения Российской Империи, 1897г., издание ЦСК МВД, LXIX. Тифлисская Губерния, СПб., 1905, с. 74-75.

²⁷ Кавказский календарь на 1917г., Тифлис, 1916, с. 206-209.

²⁸ Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886г., Тифлис, 1893.

²⁹ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 242-245.

Այստեղ նույնպես խախտված է թե՛ շատ քաղաքների և թե՛ Գորի քաղաքի հայության տոկոսային հարաբերակցությունը. այն պետք է լինի ոչ թե 20,30%, այլ՝ 27,30%: Ցավոք, ռուսական վիճակագրության այս բացը չնշելով՝ ակադեմիկոս Վ.Խոջաբեկյանն իր արժեքավոր գրքում Գորի քաղաքի հայության՝ որպես 1897թ. տոկոսային հարաբերակցության թիվ, նույնպես նշում է 20,3-ը³⁰:

Գորի քաղաք	1917թ. ³¹			
	ռուս	հայ	վր.	մուս.
	7,5 %	39,4 %	51,9 %	0,3 %

Այլ աղբյուրների համեմատությամբ՝ նշենք, որ համաձայն 1821թ. հոգևորականության անցկացրած մարդահամարի տվյալների՝ Գորի քաղաքի հայությունը բացարձակ առավելություն է ունեցել այլ ազգերի, այդ թվում՝ վրացիների նկատմամբ³²:

Հայության թիվը 1821թ. տվյալներով.

	վրացիներ և ռուսներ միասին (տուն)	հայեր (տուն)
Թիֆլիս	417	2951
Գորի	121	331
Թելավ	74	236
Սղնախ	12	377

Բերված ցուցանիշներից երևում է, որ նույն ժամանակ Գորիի վրացական և ռուսական տները միասին վերցրած կազմել են հայերի տների ընդամենը 36,6%-ը, կամ՝ հայերը կազմել են Գորիի ազգաբնակչության 63,4%-ը: Հայերը գերակա են եղել նաև աղյուսակի մյուս երեք քաղաքներում՝ Թիֆլիսում՝ 86%, Թելավում՝ 69%, Սղնախում՝ 96,8%:

³⁰ Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX – XX դարերում, XXI դարի շեմին, Երևան, 2002, էջ 123:

³¹ Кавказский календарь на 1917г., Тифлис, 1916, с. 206-209.

³² Мамулов С., Армяне в Грузии, Москва, 1995, с. 20.

1873թ. տվյալների համաձայն՝ Գորի քաղաքում հաշվվում էր 6.000 շունչ, որից առանձին ազգությունների բացարձակ թիվը և տոկոսային հարաբերակցությունն ունեին հետևյալ պատկերը³³.

Գորի քաղաք	1873թ.		
	ոուս	հայ	վր.
	254 (4,23%)	3.495 (58,25%)	2.250 (37,5%)

Փաստորեն, մեր ճշգրտած հաշվումների արդյունքում Գորիի հայության տոկոսային հարաբերակցությունն այլոց նկատմամբ վերորերյալ մի քանի թվականների համար ունեցել է հետևյալ պատկերը.

Գորի քաղաք, հայերի թիվը (%-ով)	1821թ.	1873թ.	1886թ.	1897թ.	1914թ.	1917թ.
	63,4%	58,25%	40,00%	27,30%	26,85%	39,4%

Նույն թվականներին Գորի քաղաքի հայության բացարձակ թվերը մեկտեղելով՝ կստացվի հետևյալ պատկերը.

Գորի քաղաք, հայերի թիվը	1821թ.	1873թ.	1886թ.	1897թ.	1914թ.	1917թ.
331 տուն (մոտավոր՝ 1.500-2.000 շունչ)		3.495	2.894	2.813	6.888	7.270

Ինչպես երևում է աղյուսակներից, շուրջ մեկ դարի ընթացքում Գորի քաղաքի հայերի թիվն ավելացել է մոտ 3 անգամ, հակառակ այս բացարձակ աճին՝ նվազել է քաղաքի հայության տոկոսային ցուցանիշը՝ 63,4%-ից հասնելով 39,4%-ի: Բացարձակ թվերը մատնա-

³³ Джавахов А., Город Гори (СМОМПК), вып. II, Тифлис, 1882, отд. I, с. 95.

նշում են նաև, որ մինչև 19-րդ դարի վերջին քառորդն ընկած ժամանակահատվածը Գորի քաղաքում հայերը պատկառելի թվաքանակով գերազանցել են վրացիներին, իսկ մինչև 1917թ. հայերը կազմել են քաղաքի ազգաբնակչության գրեթե կեսը:

1910թ. Գորիի հայ նամակագրի հայտնած տվյալով՝ քաղաքն ուներ շուրջ 800 տուն հայ բնակչություն³⁴: 1914թ. Գորի այցելած թղթակիցը քաղաքի ողջ ազգաբնակչության թիվը նշում է 18000, որի *«կէսից պակասը հայ է, սակայն հայախօսութիւնն իսպառ բացակայում է. մի քանի տուն հայեր կան միայն, որոնք իսկապէս գիտեն և գործ են ածում հայերէն»*³⁵: Գորիի հայության թվաքանակի մասին նույն «Հորիզոնի» էջերում կարդում ենք. *«Գորիում (խոսքը միայն քաղաքին է վերաբերում- Վ.Ս.) 700 տուն հայ կայ, մօտ 5-6.000 շունչ, բայց դրանք իրենց տանը և դրսում հայերէն չեն խօսում...»*³⁶: 1914թ. տարեցույցում նույն գավառի հայությունն ըստ դավանանքի (լուսավորչական, ուղղափառ, այլ (հավանաբար՝ կաթոլիկ) 1913թ. դրությամբ կազմում էր 22.157³⁷:

Գորի քաղաքի ժողովրդագրական պատկերը, տարբեր ազգությունների թվային հարաբերակցությունը, վերջիններիս աճման կամ նվազման միտումներն առավել պարզորոշ ուրվագծելու համար ստորև բերում ենք ամուսնությունների, ծնվածների և մահացածների թվային պատկերն՝ ըստ ազգությունների (*ռուսներ, վրացիներ, հայեր*), 1871-1880 թվականների ժամանակային կտրվածքում³⁸.

³⁴ Հորիզոն, Թիֆլիս, 1910, N 192:

³⁵ Նույն տեղում, 1914, N 131:

³⁶ Նույն տեղում, 1914, N 108:

³⁷ Кавказский календарь на 1914г., Тифлис, 1913, с. 127. Ըստ նույն աղբյուրի՝ նշյալ հայությունից բնիկներ էին 19.479-ը (մնացյալ 2.678-ը եկվոր հայությունն էր, որոնցից Գորիի գավառում ապրել են 2344 լուսավորչական դավանանքի, 2 ուղղափառ, 332 այլ (հավանաբար՝ կաթոլիկ) դավանանքի հայեր):

³⁸ Джавахов А., Город Гори (СМОМПК), вып. II, Тифлис, 1882, отд. I, с. 79, 82, 83.

ա. ամուսնությունների թվաքանակը

1871			1872			1873			1874			1875			1876			1877			1878			1879			1880		
ն	վ	հ	ն	վ	հ	ն	վ	հ	ն	վ	հ	ն	վ	հ	ն	վ	հ	ն	վ	հ	ն	վ	հ	ն	վ	հ	ն	վ	հ
5	21	24	8	27	27	10	23	27	7	27	22	2	26	23	5	26	20	5	25	20	5	31	21	9	49	29	6	26	17

բ. ծնվածների թվաքանակը

1871			1872			1873			1874			1875			1876			1877			1878			1879			1880		
ն	վ	հ	ն	վ	հ	ն	վ	հ	ն	վ	հ	ն	վ	հ	ն	վ	հ	ն	վ	հ	ն	վ	հ	ն	վ	հ	ն	վ	հ
7	121	90	15	108	83	21	121	85	16	91	95	30	126	99	39	141	136	35	109	99	25	103	98	25	120	104	19	134	85

գ. մահացածների թվաքանակը

1871			1872			1873			1874			1875			1876			1877			1878			1879			1880		
ն	վ	հ	ն	վ	հ	ն	վ	հ	ն	վ	հ	ն	վ	հ	ն	վ	հ	ն	վ	հ	ն	վ	հ	ն	վ	հ	ն	վ	հ
6	79	53	13	145	86	6	104	68	4	120	55	16	152	98	18	97	75	16	124	88	16	156	115	19	140	88	9	94	47

Գորիի գավառում հայությունն ապրել է ցիրուցան՝ այլազգիների (վրացիներ, օսեր, ռուսներ) հետ համատեղ: Այդուհանդերձ, նշվում են գյուղեր, որոնք գրեթե ամբողջովին եղել են հայաբնակ: Ստորև 3 աղյուսակներով ներկայացնում ենք **հայաբնակ, գրեթե հայաբնակ և հայաշատ** բնակավայրերի ամբողջական պատկերը.

ա. հայաբնակ բնակավայրեր

բնակավայր	1886թ. ³⁹	1912թ.	1915թ.	այլ տեղեկություններ
1. Վաղա կամ Վաղաշեն	598 շունչ, 89 ծուխ	8282. ⁴⁰	8832. ⁴¹	1914թ. Գորիի գ. մշտական թղթակիցներից մեկը հայտնում է. «Սուրամից (ավան Գորու գավառում- Վ. Մ) 15 վերստ հեռավորության վրա գտնուող գուտ հայաբնակ (ընդգծումը մերն է- Վ. Մ) Վաղա գիւղում Կ. Հ. Բար. ընկ. ջանքերով սեպտեմբերից բացում է եկ. ծխ. դպրոց» ⁴² , գյուղն ունեցել է 170 տուն հայություն (1914թ.) ⁴³ , Սբ Աստվածածին եկեղեցի
2. Կարալեթ	7012., 121ծ.	8392. ⁴⁴	8972. ⁴⁵	Սբ Աստվածածին եկեղեցի
3. Ախալքալաք⁴⁶	16002., 335ծ.	23202. ⁴⁷	---	Սբ Աստվածածին, Սբ Կարապետ եկեղեցիներ
4. Ախալտսիկ	522., 8ծ.	3252. ⁴⁸	24802. ⁴⁹	Սբ Համբարձման (Սբ Աստվածածին) եկեղեցի
5. Ղարա-Խաչ	6332., 91ծ.	11542. ⁵⁰	---	1916թ. դրությամբ՝ 160 ծուխ ⁵¹ , Սբ Աստվածածին եկեղեցի

³⁹ Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886г., Тифлис, 1893.

⁴⁰ Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 137. Ինչպես այս, այնպես էլ Գորիի գ. հայաբնակ կամ մասամբ հայաբնակ գյուղեր, ավաններ և քաղաքներ (օր.՝ Գորի քաղ.) մեր կողմից օգտագործած 1912 և 1915թթ. տարեցույցերում շատ դեպքերում նշվում են որպես վրացական: Հայության թվի անտեսումը տարեցույցում կարող ենք կապել երկու հանգամանքի հետ: Առաջին՝ տարեցույցը սովորաբար յուրաքանչյուր բնակավայրի դիմաց նշում է թվաքանակով այնտեղ գերակա ժողովրդի անունը, երկրորդ՝ հնարավոր է, որ այստեղ դարձյալ իր դերն է խաղացել Գորիի գավառի հայության վիրախոս լինելու ու այդպիսով վրացիների հետ նույնացվելու հանգամանքը: Հավելենք նաև, որ շատ են այն բնակավայրերը, որոնք 1912թ. տարեցույցում նշվում են որպես հայաբնակ, իսկ 1915թ.՝ վրացաբնակ կամ հակառակը: Ելնելով այս հանգամանքից՝ 1912թ. և 1915թ. տարեցույցերից բերել ենք միայն շնչերի քանակը, իսկ բնակավայրերի հայկականության կամ մասամբ այդպիսին լինելու մասին հիշատակության դեպքում մենք դա ընդգծված ձևով նշել ենք սովյալ տողատակում:

⁴¹ Տարեցույցում՝ հայաբնակ (Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 103).

⁴² Հորիզոն, Թիֆլիս, 1914, N 101:

⁴³ Նույն տեղում, 1914, N 218:

⁴⁴ Տարեցույցում՝ հայաբնակ (Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 164).

⁴⁵ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 135.

⁴⁶ Զջվորել Ջավախքում գտնվող Ախալքալաք քաղաքի հետ:

⁴⁷ Տարեցույցում՝ հայաբնակ (Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 128).

⁴⁸ Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 128. Գորիի գավ. հիշվում է նաև 158 շունչ կազմող օսարնակ նույնանուն 2-րդ գյուղը:

⁴⁹ Տարեցույցում՝ հայաբնակ (Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 92), Գորիի գավ. հիշվում է նաև նույնանուն ևս 5 գյուղ, որից 3-ը՝ վրացաբնակ, 2-ը՝ օսարնակ:

⁵⁰ Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 163.

⁵¹ Հորիզոն, Թիֆլիս, 1916, N 81:

բնակավայր	1886թ.	1912թ.	1915թ.	այլ տեղեկություններ
6. Քախվրել (Քվախրել, Քախուրել)	7502., 1388. ⁵²	7112. ⁵³	7632. ⁵⁴	Սբ Աստվածածին (XV-XVIդդ.), Սբ Նշան (XIV-XVդդ.) եկեղեցիներ
7. Ուփլիս-Ցիխե	5432., 1208. ⁵⁵	---	4502. ⁵⁶	1916թ. ունեցել է շուրջ 120 տուն, <u>ամբողջովին հայաբնակ</u> ⁵⁷ , եկեղեցիներ՝ Սբ Աստվածածին, Սբ Նշան, ժայռափոր (XIV-XVդդ.)
8. Դոյես	4212., 65ծ.	7602. ⁵⁸	9092. ⁵⁹	շուրջ 100-120 տուն <u>գրեթե հայաբնակ (1916թ.)</u> ⁶⁰ , Սբ Հակոբ եկեղեցի
9. Կավթիս-Իս	8282., 138ծ.	37092. ⁶¹	39492. ⁶²	Սբ Հրեշտակապետաց, Սբ Աստվածածին, Սբ Գևորգ (1595թ.) եկեղեցիներ
10. Ձեզվ	3342., 49ծ.	18872. ⁶³	20372. ⁶⁴	Սբ Աստվածածին, Սբ Պողոս-Պետրոս եկեղեցիներ
11. Ջերթ	5372., 105ծ.	9482. ⁶⁵	9872. ⁶⁶	Սբ Աստվածածին եկեղեցի
12. Տղվիավ	3462., 87ծ.	9052. ⁶⁷	942 ⁶⁸	Սբ Նշան եկեղեցի

⁵² Նույն թվականին գյուղը նշվում է զուտ հայաբնակ (գյուղում ապրող այլազգիներից նշվում է ընդամենը 1 ընտանիք վրացի):

⁵³ Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 166.

⁵⁴ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 137.

⁵⁵ Նույն թվականի վիճակագրությունում գյուղը նշվում է զուտ հայաբնակ, այսինքն՝ գյուղում ապրող այլ ազգեր չեն նշվում:

⁵⁶ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 192.

⁵⁷ Հորիզոն, Թիֆլիս, 1916, N 254:

⁵⁸ Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 153.

⁵⁹ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 122.

⁶⁰ Հորիզոն, Թիֆլիս, 1916, N 254:

⁶¹ Տարեցույցում՝ հայաբնակ (Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 160).

⁶² Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 130.

⁶³ Кавказский календарь на 1912 г., Тифлис, 1911, с. 152.

⁶⁴ Кавказский календарь на 1915 г., Тифлис, 1914, с. 120.

⁶⁵ Տարեցույցում՝ հայաբնակ (Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 157).

⁶⁶ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 126.

⁶⁷ Տարեցույցում՝ հայաբնակ և վրացաբնակ (Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 209).

⁶⁸ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 189.

բնակավայր	1886թ.	1912թ.	1915թ.	այլ տեղեկություններ
13. Բերդուկ (Բերբուկ)	472., 7 ծ.	1022. ⁶⁹	1162. ⁷⁰	Մբ Հրեշտակապետաց եկեղեցի
14. Խելթուբան	4672., 80 ծ.	6242. ⁷¹	6612. ⁷²	Մբ Հովհաննես (Մբ Աստվածածին) եկեղեցի
15. Նադարբազ	1742., 33 ծ.	5662. ⁷³	1632. ⁷⁴	Մբ Աստվածածին (Մբ Նշան) եկեղեցի
16. Նիճրիս Ներքին	4242., 65 ծ.	6962. ⁷⁵	7342. ⁷⁶	Մբ Նիկողոս եկեղեցի
17. Ռուխ	6222., 153 ծ.	19532. ⁷⁷	20962. ⁷⁸	Մբ Աստվածածին եկեղեցի
18. Գրակալ	1982., 20 ծ.	2402. ⁷⁹	2952. ⁸⁰	Մբ Աստվածածին եկեղեցի

⁶⁹ Տարեցույցում՝ հայարնակ (Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 133).

⁷⁰ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 99. Գյուղն այստեղ նշվում է *Բերբուկ* ձևով:

⁷¹ Տարեցույցում՝ հայարնակ (Кавказский календарь на 1912 г., Тифлис, 1911, с. 216).

⁷² Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 197.

⁷³ Տարեցույցում՝ հայարնակ (Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 187), տարեցույցը նույն զավառում նշում է նաև նույնանուն վրացարնակ, երկու տասնյակ շունչ կազմող գյուղը:

⁷⁴ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 163, գյուղը նշվում է օսարնակ, տարեցույցում անկա է նաև 31 շունչ կազմող վիրարնակ Նադարբազը:

⁷⁵ Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 189.

⁷⁶ Տարեցույցում՝ հայարնակ (Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 165).

⁷⁷ Տարեցույցում՝ հայարնակ (Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 198).

⁷⁸ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 175.

⁷⁹ Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 141.

⁸⁰ Տարեցույցում՝ հայարնակ (Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 112).

բ. գրեթե հայարնակ բնակավայրեր

բնակավայր	1886թ. ⁸¹	1912թ.	1915թ.	այլ տեղեկություններ
1. Ալ	2462., 45ծ.	10692. ⁸²	11142. ⁸³	100-120 տուն հայ (1916թ.) ⁸⁴ , Մբ Աստվածածին (նույնանուն 2-րդը) (XIII-XIVդդ.), Կուսանաց անապատ (XIII-XIVդդ.), Մբ Կարապետ (XIII-XIVդդ.) եկեղեցիներ
2. Դիրք	4242., 98ծ.	11012. ⁸⁵	1652. ⁸⁶	100-120 տուն հայ (1916թ.) ⁸⁷ , Մբ Աստվածածին, Մբ Թովմաս Առաքյալ եկեղեցիներ
3. Ատոց	1542., 23ծ.	7422. ⁸⁸	7872. ⁸⁹	գտնվում է Սուրամից 18-19 վերստ հեռավորության վրա ⁹⁰ , Մբ Աստվածածին եկեղեցի
4. Նարաթխև	262., 3ծ.	2612. ⁹¹	2762. ⁹²	Մբ Կարապետ եկեղեցի
5. Ցխինվալ	7442., 133ծ.	43072. ⁹³	46182. ⁹⁴	հետագայում (1922թ.) կազմավորված Հարավօսական ինքնավար մարզի, ներկայիս Հարավային Օսիայի Հանրապետության մայրաքաղաքը, Մբ Աստվածածին, Մբ Համբարձման եկեղեցիներ
6. Սուրամ	9242., 182ծ.	19592. ⁹⁵	11452. ⁹⁶	Մբ Գրիգոր Լուսավորիչ, Մբ Համբարձման եկեղեցիներ

⁸¹ Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886г., Тифлис, 1893.

⁸² Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 123.

⁸³ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 86.

⁸⁴ Արև, Բաքու, 1916, N 242:

⁸⁵ Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 152.

⁸⁶ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 121.

⁸⁷ Արև, Բաքու, 1916, N 242:

⁸⁸ Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 127.

⁸⁹ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 92.

⁹⁰ Հորիզոն, Թիֆլիս, 1916, N 94:

⁹¹ Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 187.

⁹² Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 162.

⁹³ Տարեցույցում՝ օսեր և հայեր (Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 222).

⁹⁴ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 203.

⁹⁵ Տարեցույցում՝ հայեր և վրացիներ (Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 205).

⁹⁶ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 184.

գ. հայաշատ բնակավայրեր

բնակավայր	1886թ. ⁹⁷	1912թ.	1915թ.	այլ տեղեկություններ
1. Ախաղաբա	2012., 40ծ.	4532. ⁹⁸	4922. ⁹⁹	Սբ Սիոն եկեղեցի
2. Ախաշեն	---	3102. ¹⁰⁰	3172. ¹⁰¹	Սբ Փրկիչ եկեղեցի
3. Ախոխ	752., 19ծ.	3122. ¹⁰²	3432. ¹⁰³	Սբ Աստվածածին եկեղեցի
4. Ատեն	---	12312. ¹⁰⁴	13102. ¹⁰⁵	XVIIIդ. վրաց աշխարհագիր Վախուշտին նշում է, որ Ատենը բնակեցված է եղել վրացիներով, հայերով և հրեաներով ¹⁰⁶ , Սբ Սիոն (VIIդ.) եկեղեցի: Կովկասյան հնագիտական նյութերի ժողովածուներում պահպանվում են տեղեկություններ Սբ Սիոն եկեղեցու հարավային պատին առկա հայկական արձանագրության մասին, իսկ կոմսուհի Ուվարովան Սիոնի տաճարը համարում է Էջմիածնի Սբ Հռիփսիմեի և Կարսի մարզի Ագարակի տաճարների կրկնությունը ¹⁰⁷
5. Բակուրիան	122., 4ծ.	3032. ¹⁰⁸	3482. ¹⁰⁹	---
6. Բորժոմ	2442., 82ծ.	14912. ¹¹⁰	15632. ¹¹¹	Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի

⁹⁷ Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886г., Тифлис, 1893.

⁹⁸ Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 128.

⁹⁹ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 92, նույն գավառում նշվում է նաև նույնանուն վրացարնակ 2-րդ գյուղը (163 շունչ):

¹⁰⁰ Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 128.

¹⁰¹ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 317, նույն գավառում նշվում է նաև նույնանուն վրացարնակ ևս 2 գյուղ (117 և 150 շնչերով):

¹⁰² Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 129. Տարեցույցում Ախոխ անունով 312 շնչից բաղկացած գյուղը հիշատակվում է Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառում, հնարավոր է՝ վրիպակ է:

¹⁰³ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 93.

¹⁰⁴ Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 127.

¹⁰⁵ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 92.

¹⁰⁶ Джанашвили М., Гори и его окрестности (СМОМПК), с. 192.

¹⁰⁷ Նույն տեղում, с. 182-183, 187.

¹⁰⁸ Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 131:

¹⁰⁹ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 95.

¹¹⁰ Հորիզոն, Թիֆլիս, 1911, N 39, Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 135.

¹¹¹ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 101.

բնակավայր	1886թ.	1912թ.	1915թ.	այլ տեղեկություններ
7. Գարեջվար Մեծ	772., 17ծ.	5082. ¹¹²	3472. ¹¹³	Մբ Աստվածածին եկեղեցի
8. Գարեջվար Փոքր	2722., 40ծ.	3202. ¹¹⁴	5382. ¹¹⁵	Մբ Աստվածածին եկեղեցի
9. Գոմ Վերին	72., 5ծ.	2782. ¹¹⁶	3042. ¹¹⁷	---
10. Զաքարչեն	122., 2ծ.	1432. ¹¹⁸	1662. ¹¹⁹	---
11. Թորթիզա	202., 3ծ.	4302. ¹²⁰	4492. ¹²¹	---
12. Լումիսկանա	92., 3ծ.	8202. ¹²²	---	---
13. Խանդակ Ներքին	662., 13ծ.	3802. ¹²³	4122. ¹²⁴	Մբ Նշան եկեղեցի
14. Խանդակ Վերին	1462., 23ծ.	11042. ¹²⁵	12252. ¹²⁶	Մբ Փրկիչ եկեղեցի
15. Խաշուր	852., 31ծ.	1442. ¹²⁷	տես Միխայլովն ¹²⁸	Մբ Աստվածածին եկեղեցի
16. Խիդիսթավ	242., 8ծ.	7652. ¹²⁹	8162. ¹³⁰	Մբ Նշան եկեղեցի

¹¹² Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 140.

¹¹³ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 107.

¹¹⁴ Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 140.

¹¹⁵ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 107.

¹¹⁶ Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 144.

¹¹⁷ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 111.

¹¹⁸ Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 156.

¹¹⁹ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 125.

¹²⁰ Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 210.

¹²¹ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 190.

¹²² Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 179.

¹²³ Նույն տեղում, с. 214.

¹²⁴ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 195.

¹²⁵ Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 214.

¹²⁶ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 195.

¹²⁷ Տարեցույցում՝ օտարնակ (Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 216).

¹²⁸ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 197. 1872-1917թթ. բնակավայրը կրել է *Միխայլովն* անունը, 1917-1931թթ.՝ *Խաշուր*, 1931 թվականից՝ *Ստալինիսի*, այնուհետև՝ կրկին *Խաշուր*: Այդուհանդերձ՝ 1886թ. արքրարում (Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886г., Тифлис, 1893), ինչպես տեսանք, բնակավայրը հիշատակվում է *Խաշուր* ձևով, իսկ 1912թ. տարեցույցում հիշվում են և՛ *Խաշուրը*, և՛ *Միխայլովնը*:

¹²⁹ Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 216.

¹³⁰ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 197.

բնակավայր	1886թ.	1912թ.	1915թ.	այլ տեղեկություններ
17. Խովլե	82., 1ձ.	21162. ¹³¹	22812. ¹³²	---
18. Կասպ	3552., 76ձ.	8742. ¹³³	9752. ¹³⁴	Մբ Պողոս-Պետրոս եկեղեցի
19. Կիծնիս	522., 5ձ.	4452. ¹³⁵	4982. ¹³⁶	Մբ Աստվածածին եկեղեցի
20. Կինձաթ	872., 9ձ.	2382. ¹³⁷	2552. ¹³⁸	Մբ Աստվածածին եկեղեցի
21. Ձևերա	1552., 28ձ.	5312. ¹³⁹	5562. ¹⁴⁰	Մբ Աստվածածին եկեղեցի
22. Ճալա Ներքին	---	10522. ¹⁴¹	11272. ¹⁴²	---
23. Մառան	262., 4ձ.	2862. ¹⁴³	3222. ¹⁴⁴	Մբ Պողոս-Պետրոս եկեղեցի
24. Մեջրիսիս Մեծ	442., 10ձ.	17852. ¹⁴⁵	17002. ¹⁴⁶	Մբ Սարգիս եկեղեցի
25. Մետեխ	1752., 32ձ.	7192. ¹⁴⁷	7632. ¹⁴⁸	Մբ Լուսավորիչ եկեղեցի
26. Միխայլով	---	21212. ¹⁴⁹	22092. ¹⁵⁰	---
27. Նիճրիս Վերին	252., 5ձ.	3832. ¹⁵¹	4082. ¹⁵²	Մբ Աստվածածին եկեղեցի

¹³¹ Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 217.

¹³² Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 198.

¹³³ Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 166.

¹³⁴ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 137.

¹³⁵ Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 170.

¹³⁶ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 142.

¹³⁷ Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 170.

¹³⁸ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 142.

¹³⁹ Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 152.

¹⁴⁰ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 120.

¹⁴¹ Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 222.

¹⁴² Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 204.

¹⁴³ Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 181.

¹⁴⁴ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 155.

¹⁴⁵ Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 182.

¹⁴⁶ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 157.

¹⁴⁷ Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 183.

¹⁴⁸ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 157, տարեցույցը նշում է Գորիի գավ. գոնվոլ նույնանուն ևս 2 գյուղ, որից առաջինը՝ օսարնակ, երկրորդը՝ վրացարնակ:

¹⁴⁹ Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 184.

¹⁵⁰ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 159.

¹⁵¹ Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 189.

¹⁵² Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 165.

բնակավայր	1886թ.	1912թ.	1915թ.	այլ տեղեկություններ
28. Ռեխա	1152., 32ծ.	1432. ¹⁵³	1632. ¹⁵⁴	Մբ Աստվածածին եկեղեցի
29. Սամնրիս	692., 10ծ.	3402. ¹⁵⁵	2712. ¹⁵⁶	---
30. Մասիրեթ (Մուրեթ)	282., 5ծ.	հիշատակվում են նույնանուն երկու գյուղեր՝ 478 և 166 շունչ բնակչությամբ ¹⁵⁷	հիշատակվում են նույնանուն երկու գյուղեր՝ 553 և 215 շունչ բնակչությամբ ¹⁵⁸	---
31. Սվենեթ (Սվինեթ)	922., 18ծ.	5072. ¹⁵⁹	5272. ¹⁶⁰	Մբ Երրորդություն եկեղեցի
32. Վարիան	212., 6ծ.	4812. ¹⁶¹	5272. ¹⁶²	Մբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի
33. Տիրանիս	42., 1ծ.	10342. ¹⁶³	11382. ¹⁶⁴	Մբ Աստվածածին եկեղեցի
34. Տինիսխիդ	1032., 29ծ.	3322. ¹⁶⁵	3692. ¹⁶⁶	Մբ Նշան (Մբ Աստվածածին) եկեղեցի
35. Օսիաուր	97 շ., 17 ծ.	5042. ¹⁶⁷	5152. ¹⁶⁸	Մբ Աստվածածին եկեղեցի

¹⁵³ Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 197. Ինչպես 1912, այնպես էլ՝ 1915 թվականի տարեցույցում Գորիի գավառում հիշվում է օսարնակ նույնանուն երկրորդ գյուղը:

¹⁵⁴ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 175.

¹⁵⁵ Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 200.

¹⁵⁶ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 178.

¹⁵⁷ Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 201.

¹⁵⁸ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 179.

¹⁵⁹ Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 202.

¹⁶⁰ Նույն տեղում, с. 527.

¹⁶¹ Նույն տեղում, с. 197.

¹⁶² Նույն տեղում, с. 104.

¹⁶³ Նույն տեղում, с. 209.

¹⁶⁴ Նույն տեղում, с. 188.

¹⁶⁵ Նույն տեղում, с. 209.

¹⁶⁶ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 188.

¹⁶⁷ Кавказский календарь на 1912 г., Тифлис, 1911, с. 193.

¹⁶⁸ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 169.

բնակավայր	1886թ.	1912թ.	1915թ.	այլ տեղեկություններ
36. Օտարշեն	122., 4ծ.	742. ¹⁶⁹	972. ¹⁷⁰	---
37. Քախ-Թել ¹⁷¹	---	---	---	---
38. Քարել ¹⁷²	412., 9ծ.	16562. ¹⁷³	16522. ¹⁷⁴	---
39. Քվիշ-Խեթ	---	1682. ¹⁷⁵	9792. ¹⁷⁶	---

Ծանոթություն. հայաբնակ, գրեթե հայաբնակ և հայաշատ բնակավայրերը ներկայացնող բոլոր երեք աղյուսակներում 1886թ. տվյալները ներկայացնում են զուտ հայերի թվաքանակը (ծուխ, շունչ), իսկ 1912 և 1915 թվականների տվյալները՝ տվյալ բնակավայրի ընդհանուր ազգաբնակչության թիվը: Գծանշված վանդակներում տվյալները բացակայում են:

Գորիի գավառի ամբողջովին կամ մասամբ հայաբնակ գյուղերի ամբողջական շարքից դուրս ենք թողել Բորժումի տեղամասի նույնանուն գյուղական հասարակության մեջ մտնող ծայր հարավային **Տաբաձղուր** (Կարմրաժամ, Ղզլքիլիսա, 1886թ. ընտանեկան ցուցակագրության մեջ նշվում է *Красная церковь (Цители-сагдари)* և **Մուլիթ** գյուղերը՝ վերջիններս համարելով Ջավախքի (Ախալքալաքի գավառի) անբաժան մաս¹⁷⁷:

¹⁶⁹ Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 193.

¹⁷⁰ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 170.

¹⁷¹ Հորիզոն, Թիֆլիս, 1911, N 39:

¹⁷² Հորիզոն, Թիֆլիս, 1917, N 99:

¹⁷³ Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 165.

¹⁷⁴ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 136.

¹⁷⁵ Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 167:

¹⁷⁶ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 139.

¹⁷⁷ Ի դեպ, Խորհրդային Վրաստանի իշխանությունները նույնպես, հիմնվելով ցարական այս անհեթեթ վարչաբաժանման վրա, ինչպես վերոհիշյալ, այնպես էլ վերջիններիս հարակից Բալանթա և Չխարուլա գյուղերը (որոնք անգամ չեն մտել Գորիի գավառի մեջ՝ վարչականորեն հանդիսանալով Ախալքալաքի գավառի մաս) կտրեցին Ախալքալաքի շրջանից և մտցրին Բորժումի շրջանի կազմ: Գյուղերի հայաթափման նպատակ հետապնդող արհեստական այս վարչաբաժանումը նույնը թողեցին նաև նորանկախ Վրաստանի իշխանությունները:

1886թ. աղբյուրում հատուկենտ հայ ընտանիքներ են հիշատակվում նաև Գորիի գավառի **Արադեթ, Փոքր Մեջրիսիս, Չանգիլարա, Չումաթելեթ, Օրոնա, Աբանո, Մերոնիս, Վերին Ճալա, Դրե, Ներքին Գոմ, Սկրա, Վերին Խվեղուրեթ, Կուրտա, Դիցա** գյուղերում:

Գորիի գավառի և հարևան Քուրայիսի նահանգի բոլոր վայրերին քաջածանոթ, սուրամցի հայտնի մտավորական, Սուրամի դպրոցի ավագ ուսուցիչ, թղթակից Հ.Դավթյանցը ուշագրավ տեղեկություններ է հաղորդում ոչ միայն Գորիի գավառի հայության թվաքանակի մասին, այլև առանձին գյուղերի օրինակով ցույց է տալիս տեղի հայության աղետալի վիճակը՝ կապված նրա թվաքանակի օրավուր կրճատման, ազգափոխ լինելու և ձուլման հետ: Հ.Դավթյանցն իր ուսումնասիրություններում հանգում է այն եզրակացության, որ միայն 20-25 տարվա ընթացքում Գորիի գավառի հայության թիվը 20.000-ից նվազել է և այժմ (1916թ.) հազիվ հասնում է 16-17.000-ի¹⁷⁸: Խոսելով առանձին գյուղերի մասին՝ Հ.Դավթյանցը, բերում է Սուրամից 9-10 վերստ հեռու գտնվող **Խցիս** (1912թ. «Կովկասյան տարեցույցի» տվյալներով՝ 466 շունչ¹⁷⁹, 1915թ.՝ 497¹⁸⁰) գյուղի օրինակը, որի 15-16 հայ ընտանիքից մնացել էր ընդամենը 2-ը՝ «*Ղէէնաշլիլի*» ազգանվամբ, մնացածները ձուլվել էին վրացիների հետ: Թե ինչ հիմքերով է նշյալ երկու ընտանիքը հայ համարում՝ հեղինակը չի մանրամասնում, մեր ենթադրմամբ՝ վրացահունչ ազգանվամբ այսպիսի ընտանիքները հայ են համարվել ըստ սեփական համոզմունքի կամ ցուցմունքի: Այլապես՝ մյուսները, թեկուզև վրացական ազգանուններով, նույնպես կհամարվեին հայեր: Հաջորդը Ալ գյուղից 4,5 վերստ հեռավորության վրա գտնվող **Նաբաթիս** գյուղի օրինակն է, որտեղ նախկինում ապրել է 25 ընտանիք, իսկ այժմ (1916թ.) մնացել է 3-ը՝ «*Փափակերաշլիլի*» ազգանունով: «*Այսպիսի օրինակներն անթիւ են*», -

¹⁷⁸ Հորիզոն, Թիֆլիս, 1916, N 94:

¹⁷⁹ Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 219.

¹⁸⁰ Кавказский календарь на 1915г., Тифлис, 1914, с. 200.

նշում է Հ.Դավթյանցը¹⁸¹: Նշյալ արժեքավոր վկայությունը մեզ ստիպում է խիստ զգուշորեն մոտենալ հասկապես XXդ. 2-րդ տասնամյակի վիճակագրական աղբյուրներում առկա տվյալներին, քանի որ մշտապես ընթացող էթնոձուլման գործընթացների արդյունքում արդեն այդ պահին բավական մեծաքանակ հայեր նշվել են որպես վրացիներ: Այսպես, 1926թ. Խորհրդային Միության առաջին մարդահամարի տվյալներով՝ ոչ վրացի ժողովուրդներից, մոռանալով մայրենին, վրաց լեզուն սեփականացրել է 82.034 մարդ, որոնց հիմնական մասը, ըստ աղբյուրի, հայեր են եղել¹⁸²:

Գորիի գավառի հայաբնակ գյուղերից շուրջ 8-ի թվակազմի, եկեղեցի, դպրոց և քահանա ունենալ-չունենալու մասին արժանահավատ տեղեկություններ է հաղորդում նույն շրջանի անվանի մտավորական, հասարակական-քաղաքական գործիչ, հայկական մի շարք թերթերի բազմամյա թղթակից, Հ.Յ.Դաշնակցություն կուսակցության Գորիի կոմիտեի անդամ Գիսակը (Գաբրիել Հովհաննիսյան)¹⁸³: Ստորև ներկայացնում ենք Գորիի շրջանի (շրջանն այս պարագայում չի նույնացվում նույնանուն գավառի հետ, քանի որ ցանկում հիշատակվում են նաև Գորիի հետ սերտորեն կապված հարևան Դուշեթի գավառի **Անանուր և Դուշեթ** բնակավայրերը ևս) 8 գյուղերի պատկերը 1916թ. դրությամբ¹⁸⁴.

¹⁸¹ Հորիզոն, Թիֆլիս, 1916, N 94:

¹⁸² Закавказское Центральное Статистическое Управление, Население Закавказья, Всесоюзная перепись населения 1926г., краткие итоги, Тифлис, 1928, с. IX.

¹⁸³ Հովակիմյան Բ.Մ., Հայոց ծածկանունների բառարան, Երևան, 2005, էջ 123:

¹⁸⁴ Հորիզոն, Թիֆլիս, 1916, N 81:

Գործի շրջան	Եկեղեցի	դպրոց	քահանա	ծուխ
Ալ գյուղ	<i>ունի</i>	<i>չունի</i>	<i>չունի</i>	120
Ղարախաչ	<i>ունի</i>	<i>չունի</i>	<i>չունի</i>	160
Տինխախնդ	<i>ունի</i>	<i>չունի</i>	<i>չունի</i>	40
Դոես	<i>ունի</i>	<i>չունի</i>	<i>չունի</i>	120
Դիրք	<i>ունի</i>	<i>չունի</i>	<i>չունի</i>	100
Տղվիավ	<i>ունի</i>	<i>չունի</i>	<i>չունի</i>	70
Անանուր	<i>ունի</i>	<i>չունի</i>	<i>չունի</i>	100
Դուշեթ	<i>ունի</i>	<i>ունի</i>	<i>չունի</i>	200

Եկեղեցիները

Բացի 18-րդ դ. աշխարհագիր Վախուշտիից, Գորի քաղաքի հայոց եկեղեցիների մասին տեղեկություններ կան Ցարական Ռուսաստանի աստիճանավորների կազմած և 1836թ. Ս.Պետերբուրգում հրատարակած տեղեկագրում: Տեղեկագիրը կազմելու համար վերջիններս 1828թ. գործուղվել էին Անդրկովկաս, աշխատել մի քանի տարի. «Գորիում կան մի քանի եկեղեցիներ. մեկ հունա-ռուսական (գնդի եկեղեցին), երեք վրացական, նույնքան հայկական և մեկ կաթոլիկական: Մինչև 600 տուն կա...»¹⁸⁵: Ըստ Գորիի քաղաքային ուսումնարանի տեսուչ Ա.Ջավախովի հաղորդած տվյալների՝ XIX դարավերջին Գորին ունեցել է շուրջ 7 հայ լուսավորչական եկեղեցի¹⁸⁶, որոնցից մեկը, թերևս՝ ամենազվապուրը, կոչվել է Աստվածածնա Մայր եկեղեցի¹⁸⁷: Ա.Ջավախովը Գորիի ամենահայտնի եկեղեցիների շարքին է դասում հայոց եկեղեցիներից Սբ Ստեփանոսը. «...բարձր, գոթական քարերից

¹⁸⁵ Բուխնիկաշվիլի Գ., նշվ. աշխ., էջ 55

¹⁸⁶ Джавахов А., Город Гори (СМОМПК), вып. II, Тифлис, 1882, отд. I, с. 70.

¹⁸⁷ Հորիզոն, Թիֆլիս, 1910, N 148: Մնացյալ եկեղեցիները կոչվել են՝ Սբ Ստեփանոս, Սբ Գրիգոր Լուսավորիչ, Սբ Համբարձում, Սբ Թովմաս Առաքյալ: Ա.Ջավախովը նշում է, որ Գորիի բոլոր եկեղեցիների շուրջ կեսը գտնվելիս է եղել մոտակա գերեզմանոցում: Հնարավոր է, որ հայկականներից երկուսը ևս, որոնց անունները չեն հիշատակվում, գտնվեին այնտեղ:

բրգաձև տանիքով, ծածկված բազմերանգ հախճաղուսիկներով, մուտքի վրայի աշտարակիկով, ուր տեղավորված են տարբեր մեծության զանգեր: Եկեղեցին բաղկացած է 3 առանձին հարկերից, որոնցից վերին երկուսը կարելի է համարել ինքնուրույն եկեղեցիներ, իսկ ստորին հարկը ծառայում է որպես դամբարան: Վերջինումն այժմ գտնվում են երեք անհայտ սրբերի մասունքներ, որոնց զլխատել են...»¹⁸⁸: Ե՛վ 1882թ.¹⁸⁹, և՛ 1915թ.¹⁹⁰ աղբյուրները վկայակոչում են, որ Գորիի հայոց եկեղեցիներն ունեցել են միջնակարգ կամ սեմինարիական կրթությամբ 6 քահանա: Ինչպես վերը նշեցինք, բացի Գորիից, եկեղեցիներ է ունեցել նաև գավառի շուրջ 50 բնակավայր, որոնց մի մասի կառուցումը թվագրվում է XIII-XVI դարերով:

Դպրոցները, կրթական կյանքը

Գորի քաղաքում գործել է **երկսեռ-մեկդասյա ծխական դպրոց**, որի կարիքների համար տեղի հայ ակտիվիստների կողմից պարբերաբար կազմակերպվել են հասարակական զբոսանքներ, ներկայացումներ և այլն¹⁹¹: Գորիի հայոց դպրոցը հիմնադրվել է 1858թ. հուլիսի 13-ին և մինչև 1889թ. չի ունեցել դպրոցական սեփական հարմարավետ շինություն: Եվ միայն նշյալ թվականին գորեցի Կոստանդին և Հովհաննես Ալիխանյան եղբայրները Գորիի Ստ Ստեփանոս եկեղեցու բակում հիմնում են դպրոցական երկհարկանի շենքը, ուր և 1914թ. դրությամբ սովորում էր շուրջ 110-115 աշակերտ (երկու սեռից): Դպրոցը նույն ժամանակ ունեցել է 2 ուսուցչուհի, 1 կրոնուսույց քահանա և 1 ավագ

¹⁸⁸ Джавахов А., Город Гори (СМОМПК), вып. II, Тифлис, 1882, отд. I, с. 70.

¹⁸⁹ Նույն տեղում, էջ 95:

¹⁹⁰ Հորիզոն, Թիֆլիս, 1915, N 231:

¹⁹¹ Նույն տեղում, 1910, N 165: Հետաքրքրական է մի թղթակցի հաղորդումը, որ Գորի քաղաքի հայությունը տեղի ծխական դպրոցին օգնելու հարցում ցուցաբերում է քար անտարբերություն, իսկ ահա գավառապետի կնոջ՝ իշխանուհի Վախվախովայի կազմակերպած զբոսանքին, որը նպատակ ուներ օգնելու տեղի բանտարկյալներին, հայության այդ քար անտարբեր զանգվածները ցուցաբերում են մեծ ակտիվություն (նույն տեղում, 1910, N 192):

ուսուցիչ: Դպրոցի առաջին հարկում Կովկասի Հայոց բարեգործական ընկերության (ԿՀԲԸ) տեղի մասնաճյուղի միջոցներով երեխաները պարապել են զամբյուղագործություն¹⁹²: Հողվածագիրը, խոսելով Գորիի դպրոցի վիճակի մասին, մտահոգված նշում է, որ Գորիի երեխաները դպրոց են մտնում 7-8 տարեկան հասակում՝ մի բառ անգամ չհմանալով հայերեն: Դուրս գալով դպրոցից՝ վերջիններս նույնքան արագ մոռանում են հայերենն ու վրացախոս ծնողների միջավայրում արագորեն տրվում վրացերենին: Վերջինս գորեցի հայերի, թեմի առաջնորդի ու հոգաբարձության ուշադրությունն է հրավիրում այս տխուր իրողության վրա և խորհուրդ տալիս անպայման Գորիում բացել երկրորդ, երրորդ և չորրորդ դասարանները, այլապես, ըստ հեղինակի, աննպատակահարմար է ունենալ միմիայն մեկդասյա դպրոց: Այս շրջանակներում առաջարկ է արվում բացել նաև նախապատրաստական դասարան, «...որտեղ երեխաներին պիտի սովորեցնել միայն հայախօսութիւն, որպէսզի հնարաւոր լինի նրանց հետ անցնել նաեւ թաւաբանութիւն, իրագննութիւն եւ հայոց լեզու, ապա եւ մնացած առարկաները»¹⁹³:

Հավելենք նաև, որ նշյալ դպրոցը 1881թ. հիշատակվում է որպես **Հայկական հոգևոր արական ուսումնարան**¹⁹⁴, որը նույն թվականին ունեցել է շուրջ 47 աշակերտ, 2 ուսուցիչ: Դպրոցն իր եկամուտները գոյացրել է 3 հայոց եկեղեցիներից ստացված միջոցներով: Նույն՝ 1881թ. Գորիում գործել է նաև Հայկական իգական տարրական դպրոցը, որի եկամուտները նույնպես ստացվել են հայոց եկեղեցիներից: Նույն ժամանակ դպրոցն ունեցել է 29 աշակերտուհի, 1 ուսուցչուհի¹⁹⁵: Երկու դպրոցների միացումը, հավանաբար, տեղի է ունեցել հետագա տարիներին:

¹⁹² Հորիզոն, Թիֆլիս, 1914, N 108:

¹⁹³ Նույն տեղում:

¹⁹⁴ *Джавахов А.*, Город Гори (СМОМПК), вып. II, Тифлис, 1882, отд. I, с. 107.

¹⁹⁵ Նույն տեղում, с. 103.

Զննելով XXդ. երկրորդ տասնամյակի վիճակագրությունը՝ նշենք, որ այդ տարիներին Գորիի դպրոցի աշակերտության թիվը հետզհետե ավելացել է: Այսպես, 1915թ. ուստարվա ավարտին այն եղել է 145 (նախորդ ուստարվա համեմատ ավելացել է 30-35-ով), իսկ ահա հաջորդ՝ 1915/16 ուսումնական տարում, համաձայն նորեկների դիմումների, այդ թիվը կազմել է 180: Վերախոս երեխաներին մայրենի լեզվին վարժեցնելու համար նույն ուստարում Գորիի դպրոցում բացվել է նաև նախակրթարան կամ նախապատրաստական բաժանմունք¹⁹⁶: Կրկնապատկվել է նաև դպրոցի ուսուցիչների թիվը՝ 4-ից հասնելով 8-ի¹⁹⁷:

1876թ. Գորիում բացվում է **Անդրկովկասյան Ուսուցչական Սեմինարիան**, որին կից բացվում է ևս չորս տարրական ուսումնարան. վրացական (բացվել է 1876թ.), հայկական (բացվել է 1878թ.), ռուսական (բացվել է 1879թ.) և մուսուլմանական (թաթարական, բացվել է 1880թ.)¹⁹⁸: 1876-1881թթ. սեմինարիայում սովորող հայ սաների թիվն ըստ տարիների բաշխվում է հետևյալ ձևով¹⁹⁹.

1876թ.	1877թ.	1878թ.	1879թ.	1880թ.	1881թ.	ընդամենը
6	6	7	9	9	15	52

Ինչպես երևում է աղյուսակից, նշյալ 6 տարիների ընթացքում սեմինարիան ունեցել է տարեկան միջինը մոտավորապես 9 հայ սան: Բացի սրանից, սեմինարիային կից տարրական ուսումնարաններում այս տարիներին սաների թիվը կազմել է 490, որտեղ, ինչպես տեսանք, տեղ է գտել նաև հայկական տարրական ուսումնարանի հայ երեխաների թիվը:

¹⁹⁶ Հորիզոն, Թիֆլիս, 1915, N 139:

¹⁹⁷ Նույն տեղում, 1915, N 231:

¹⁹⁸ Джавахов А., Город Гори (СМОМПК), вып. II, Тифлис, 1882, отд. I, с. 101, հմմտ.՝ *Բուխ-նիկաշվիլի Գ.*, նշվ. աշխ., էջ 62:

¹⁹⁹ Джавахов А., Город Гори (СМОМПК), вып. II, Тифлис, 1882, отд. I, с. 102.

1830 թվականից Գորիում գործում էր գավառային ուսումնարանը, որը 1872թ. վերակազմավորվեց **Գորիի չորսդասյա քաղաքային ուսումնարանի**, որտեղ, ի թիվս այլ առարկաների, դասավանդվում էր նաև հայոց լեզու²⁰⁰: Սկսած 1830թ., մինչև 1881թ., Գորիի գավառային, այնուհետև՝ քաղաքային ուսումնարանում ուսանած սաների թիվն ըստ տարիների բաշխվում է հետևյալ կերպ.

տարի	ռուս	վրացի	հայ	տարի	ռուս	վրացի	հայ
1830	--	11	3	1856	8	45	23
1831	--	16	12	1857	9	30	35
1832	2	24	14	1858	7	40	44
1833	1	37	15	1859	4	35	34
1834	2	48	25	1860	2	39	38
1835	2	50	30	1861	5	51	34
1836	--	56	34	1862	8	65	38
1837	--	43	27	1863	10	62	42
1838	--	26	24	1864	14	46	45
1839	2	28	28	1865	13	56	41
1840	2	40	31	1866	17	51	57
1841	1	56	35	1867	19	39	56
1842	--	52	46	1868	18	35	53
1843	--	64	53	1869	18	48	52
1844	1	64	68	1870	18	47	39
1845	2	58	67	1871	18	65	39
1846	5	66	64	1872	23	67	41
1847	5	68	57	1873	23	69	43
1848	6	66	65	1874	23	91	49
1849	6	66	55	1875	27	111	55

²⁰⁰ Նույն տեղում, էջ 104:

տարի	ռուս	վրացի	հայ	տարի	ռուս	վրացի	հայ
1850	16	44	13	1876	27	97	54
1851	18	39	13	1877	31	117	40
1852	14	67	22	1878	23	156	30
1853	16	68	38	1879	15	147	40
1854	14	69	27	1880	15	159	74
1855	11	63	24	1881	14	189	59

Բերված թվերից ելնելով՝ կարելի է նշել, որ շուրջ 52 տարիների ընթացքում Գորիի քաղաքային ուսումնարանի հայազգի սաների տարեկան միջին թիվը կազմել է 39,3:

1881թ. Գորիում բացվել է **Անաստասիական իզական պրոգիմնագիան**: Նույն ժամանակ, դեռևս նախապատրաստական դասարանի 3 բաժանմունքում միասին, սովորում էին 86 վրացի, 34 հայ, 11 ռուս, 1 գերմանացի, 2 ֆրանսիացի, 1 աբխազ, 1 օս աշակերտուհիներ²⁰¹:

Բացի **Գորի** քաղաքից՝ հայոց եկեղեցիներին կից տարբեր տարիներին բացված և գործող ծխական դպրոցներ են հիշատակվում **Քախ-Թել**²⁰², **Ախալքալաք**²⁰³, **Ցխինվալ**²⁰⁴, **Բորժոմ**²⁰⁵, **Սուրամ**²⁰⁶ (*ծխական, երկսեռ, երկդասյա*)²⁰⁷, **Վաղաշեն** (*գյուղի ծխական դպրոցը բացվել է 1914թ.*՝ *ԿՀԲԸ Սուրամի ճյուղի ջանքերով, նույն ժամանակ դպրոցն ուներ 52 երկսեռ սաներ և մի ներսիսյանավարտ ուսուցիչ*)²⁰⁸, **Քավթիս-Խև** (*հիմնադրվել է 1916թ.*՝ *Վրաստանի և Իմերեթի թեմի քա-*

²⁰¹ Նույն տեղում, էջ 107:

²⁰² Հորիզոն, Թիֆլիս, 1911, N 39:

²⁰³ Նույն տեղում, 1916, N 254:

²⁰⁴ Նույն տեղում:

²⁰⁵ Նույն տեղում, 1911, N 39:

²⁰⁶ Նույն տեղում, 1910, N 281:

²⁰⁷ Նույն տեղում, 1912, N 116:

²⁰⁸ Նույն տեղում, 1914, N 246: 1916թ. վերջին Սուրամից Հ.Դավթյանը հայտնում է, որ Վաղա գյուղի դպրոցն այդ տարի բացվել է դեկտեմբերի 1-ին, իսկ ուսուցիչ չունենալու պատճառով հրավիրվել է գյուղի 60-ամյա քահանան (նույն տեղում, 1916, N 286):

հանայության ջանքերով և հատկացված եկեղեցական միջոցներով, նույն թվականին դպրոցն ունեցել է 200-ից ավելի աշակերտ)²⁰⁹, **Զերթ**, **Զեզվ**²¹⁰, **Ղարա-Խաչ**²¹¹, **Տղվիավ**, **Կարալեթ**²¹², **Քախվրել**²¹³, **Կասպ**²¹⁴, **Ալ**²¹⁵ գյուղերում և ավաններում: Նշյալներից՝ Սուրամի հայոց դպրոցը հիմնադրվել է 1863թ., և տեղի մտավորականները որոշել և 1913թ. հուլիսի 21-ին մեծ շուքով տոնել են դպրոցի հիսնամյակը: Հոբելյանական հանձնաժողովի նախագահ է եղել Սուրամի քահանա, իր ժամանակի ամենաակտիվ գործիչներից և թղթակիցներից՝ Հովսեփ ք. Առյուծյանը, քարտուղարը՝ Հ.Դավթյանը: Նույն հանձնաժողովի կողմից որոշվել է պատրաստել և հրատարակել նաև հիսնամյա դպրոցի անցած ուղին ներկայացնող գիրք: Ժամանակի մամուլն իր էջերում լայնորեն լուսաբանել է այս իրադարձությունը²¹⁶: 1914թ. դրությամբ Սուրամի դպրոցն ունեցել է 4 անջատ դասարան և 5 ուսուցիչ: Դպրոցում գործել է նաև երգեցողության քառաձայն խումբը²¹⁷:

Գործում երբեմն անցկացվել են նաև գավառային ուսուցչական ժողովներ, որտեղ քննարկվել են կրթական-լուսավորչական հարցերին, դպրոցական ծրագրերին, վիրախոս հայության առջև ծառայած հիմնախնդիրներին առնչվող և այլ հարցեր: Այդպիսի մի խոշոր գավառային ուսուցչական ժողով է տեղի ունեցել 1911թ. ապրիլին, որին

²⁰⁹ Արև, Բաքու, 1916, N 289: Դպրոցը բացել են օտարախոս վայրերում դպրոցների բացման համար Թիֆլիսում ստեղծված քահանայական հանձնաժողովի անդամներ Խ.ք.Խուցյանը և Ս.ք.Սահակյանը (նույն տեղում, 1916, N 219):

²¹⁰ Ժամանակի մամուլը հայտնում է, որ հայ վաճառական բարերար Աֆրիկյանը պատրաստակամություն է հայտնել Վրաստանի գյուղերում պահել 7 դպրոց, նա արդեն **Կարալեթ**, **Զեզվ** և **Զերթ** գյուղերի համար նվիրաբերել էր 1600 ռուբլի (Արև, Բաքու, 1916, N 289):

²¹¹ **Ցիլինվալ**, **Կասպի**, **Քախվրել** (**Քախուրել**), **Զեզվ**, **Քավթիս-Խև**, **Ղարախաչ** գյուղերում և ավաններում հայկական դպրոցներ է հիշատակում Ս.Մամուլովը (*Мамулов С., Армяне в Грузии. Москва, 1995, с. 125*):

²¹² Հորիզոն, Թիֆլիս, 1916, N 254: Թղթակից Գիսակը հայտնում է, որ նշյալ տարվանից բարերար Տ.Աֆրիկյանի, Թիֆլիսի «Քահանայական հանձնաժողովի», ԿՀԲԸ ջանքերով դպրոցներ են բացվելու նաև **Զեզվ**, **Ղարախաչ**, **Տղվիավ** և **Կարալեթ** գյուղերում:

²¹³ Հորիզոն, Թիֆլիս, 1916, N 254:

²¹⁴ Նույն տեղում:

²¹⁵ Նույն տեղում, 1916, N 286:

²¹⁶ Նույն տեղում, 1912, N 158, N 257, 1913, N 109, N 161:

²¹⁷ Նույն տեղում, 1914, N 155, 1915, N 145:

մասնակցել է նաև Կովկասյան ուսուցչական միության կենտրոնական վարչության ներկայացուցիչ Գ.Գարդիշյանը: Ի թիվս այլ հարցերի, ժողովում քննարկվել և որոշվել է հիմնել **Կովկասյան ուսուցչական միության Գործի ճյուղ**, կազմվել է ճյուղի վարչություն²¹⁸: 1917թ. մայիսի 14-ին Թիֆլիսում կայանալիք Հայ ուսուցչական համագումարի օրակարգի հստակեցման նպատակով Գործում գումարվել է ուսուցչական մեկ այլ ժողով, որի 4 նիստերից 2-ին մասնակցել են նաև Գործի շրջանից այցելած հայ ուսուցիչները: Բնակավայրերը, որտեղից Գործի քաղաք են գործուղվել նշյալ ուսուցիչները, հետևյալներն են. **Սուրամ, Ախալքալաք (Գործի), Ցիսինվալ, Կասալի, Միխայլովո, Քարել, Քվիշ-Խետ, Քվեմո-ճալա, Քախվրել, Ածղուր, Կավթիս-Խև, Մաչխեր**²¹⁹:

Գործի մտավորականությունը (Սուրամի դպրոցի ավագ ուսուցիչ Հ.Դավթյանը և այլք) հաճախ է մտահոգություն հայտնել, որ հսկայածավալ տարածք զբաղեցնող Վրաստանի և Իմերեթի հայոց թեմը կառավարվում էր մի թեմական տեսչով, որը, բնականաբար, անգամ մեծ ցանկության դեպքում, դժվար թե կարողանար կասեցնել «*ջայլամի քայլերով օտարացման ճամբով քայլող*» ցարուցիր հայ ժողովրդի այլասերումը²²⁰:

Մշակութային, հասարակական-քաղաքական կյանքը, կազմակերպությունները, միությունները

Խոսելով Գործի հայկական մշակութային կյանքի մասին՝ տեղի թղթակից Գիսակը լուրջ մտահոգություն է հայտնում՝ նշելով, որ Գործին կտրված է հայկական կյանքից: Նշյալ հանգամանքն առավել ցայտուն պատկերելու համար բերվում է Գործում ստացվող հայկական

²¹⁸ Նույն տեղում, 1911, N 90:

²¹⁹ Նույն տեղում, 1917, N 99:

²²⁰ Նույն տեղում, 1914, N 129, 192: Այդ օրերին խոսակցություններ են շրջանառվել Վրաստանի և Իմերեթի թեմում երկու թեմական տեսուչ ունենալու մասին, անգամ շրջանառվել է ընտրվածներից մեկի՝ Ղարաբաղի դպրոցների նախկին թեմական տեսուչ Ստ. Տեր-Ավետիքյանի անունը:

թերթերի թիվը, այն է՝ «Հորիզոն» ստանում էր 2 հոգի, «Արև»՝ 2, «Մշակ»՝ 6, «Խաթաբալա»՝ 1 հոգի, «Հասկերը»՝ հայոց ուսումնարանը²²¹: Հավելենք նաև, որ նշյալներից, բացի «Խաթաբալա»-ից և, փաստորեն, «Հասկեր»-ից, մնացյալ բոլոր թերթերն ստացողները հանդիսացել են բացառապես տեղի քահանաները:

Գործում 1916թ. դրությամբ գործել են **«Կանանց խմբակ», «Հայ գրասերների խմբակ», «Հասարակական ակումբ»** միավորումները, որոնք փորձել են ակտիվացնել տեղական կյանքը: Պահպանված տեղեկություններով՝ վերջիններիս գործունեությունն ուղղված է եղել նաև արդեն ցեղասպանություն ապրած արևմտահայության բեկորներին և հատկապես գաղթական որբերին օժանդակելուն²²²: 1917թ. փետրվարյան հեղափոխությունից հետո որոշ ակտիվություն նկատվեց նաև Գործի հասարակական-քաղաքական կյանքում: Հայ քաղաքական կազմակերպություններից արդեն պաշտոնական հրապարակի վրա հանդես եկավ **Հ.Յ.Դաշնակցություն կուսակցությունը**, որը հայ ազգաբնակչության անունից առաջարկում էր քաղաքի Ժամանակավոր գործադիր կոմիտեում ունենալ 2 ձայն²²³: 1917թ. Մարտի 9-ին հայոց դպրոցում տեղի ունեցած ժողովի արդյունքում հիմնվել է **«Գործի Հայկական կուլտուրական միությունը»**²²⁴, որն արդեն ապրիլի 4-ի դրությամբ ուներ 102 անդամ²²⁵: 1917թ. դրությամբ գործել է նաև **«Գործի հայ զինվորական միությունը»**²²⁶: 1917թ. հուլիսին ՀՅԴ Գործի Կո-

²²¹ Հորիզոն, Թիֆլիս, 1915, N 231:

²²² Նույն տեղում, 1916, N 3:

²²³ Հորիզոն, Թիֆլիս, 1917, N 57: 1917թ. մարտին ՀՅԴ Գործի կոմիտեն նամակ է հղում Պետրոգրադ՝ Կերենսկուն և Չխեիձեին, որում գովեստի խոսքեր է ասում 1917թ. փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխության արդյունքում ձևավորված նոր կառավարության հասցեին՝ միաժամանակ պատրաստակամություն հայտնելով ամեն կերպ պաշտպանել դեմոկրատական կարգերը (նույն տեղում, 1917, N 63):

²²⁴ Հորիզոն, Թիֆլիս, 1917, N 57:

²²⁵ Նույն տեղում, 1917, N 73:

²²⁶ Նույն տեղում, 1917, N 183: Պահպանվել է Գործի հայ զինվորական միության նամակը՝ ուղղված զինվորական և ծովային նախարար Կերենսկուն:

միտեի նախաձեռնությամբ մեծ շուքով բացվում է քաղաքի անվճար ընթերցարանը, իսկ կոմիտեի նախագահ Ս.Դուրգենյանը նույն ժամանակ բացել է ամառային դպրոց քաղաքի հայ անգրագետ զինվորների համար²²⁷:

Ինչպես Անդրկովկասի այլ հայաշատ վայրերում, Գորիի գավառում նույնպես իր մեծ ճյուղավորումն ուներ **Գովկասի Հայոց բարեգործական ընկերությունը (ԿՀԲԸ)**, որն իր ճյուղային կենտրոնները տարածել էր գավառի մի շարք գյուղերում և ավաններում: ԿՀԲԸ նպաստների շնորհիվ Գորիի մի շարք բնակավայրերում տարիներով գործել են դպրոցներ, գրադարան-ընթերցարաններ, իրականացվել հայանպաստ միջոցառումներ: ԿՀԲԸ մասնաճյուղերի իրականացրած միջոցառումների (հետևաբար նաև՝ մասնաճյուղերի գոյության) մասին բավարար տեղեկություններ է հաղորդում ժամանակի մամուլը, որի թղթակիցներից շատերը նաև նշյալ կառույցի այս կամ այն մասնաճյուղի վարչության անդամ կամ նախագահ են եղել: Պահպանված տեղեկություններն ի մի բերելով՝ նշենք, որ ԿՀԲԸ-ն իր մասնաճյուղերն է ունեցել **Գորիում, Դուշեթում** (*վարչության նախագահ Յ. քահ. Ապրիլյան*)²²⁸, **Սուրամում** (*հիմնվել է 1907թ.*)²²⁹ և մի շարք այլ բնակավայրերում: 1914թ. ԿՀԲԸ Սուրամի ճյուղի ջանքերով նույն տեղում բացվել է **գրադարան-ընթերցարան**²³⁰:

1915թ. Բորժումի և Սուրամի ներկայացուցիչները հիմնել են Հայոց Դրամատիկական ընկերության Բորժում-սուրամյան ճյուղը²³¹:

Գորիի գավառի հայությունն ակտիվ մասնակցություն է ունեցել նաև Առաջին աշխարհամարտին: Հայության բազմաթիվ ներկայացուցիչներ ընդգրկվել են հայկական կամավորական գնդերում: Օրի-

²²⁷ Հորիզոն, Թիֆլիս, 1917, N 155:

²²⁸ Նույն տեղում, 1910, N 281:

²²⁹ Նույն տեղում, 1914, N 70:

²³⁰ Նույն տեղում, 1914, N 155:

²³¹ Նույն տեղում, 1915, N 178: Մասնաճյուղն ընտրել է իր վարչությունը, փոխանդամներն ու վերստուգիչ հանձնաժողովի անդամները:

նակ, 1915թ. հունիսին Սուրամում մեծ շուքով հողին է հանձնվել հայկական կամավորական գնդի զինվոր Կարապետ Բիբիշյանի դին: Թաղման նկարագրությունից իմանում ենք, որ Սուրամում, բացի ընդհանուր գերեզմանոցից, եղել է նաև հայոց առանձին գերեզմանատուն, ուր և Սուրամի զինվորական հիվանդանոցի ղեկավարության թույլատրմամբ ամփոփել են զոհված զինվորի դին²³²:

Զբաղմունքը

19-րդ դարավերջին Գորիի հայությունն զբաղվել է և՛ արհեստագործությամբ, և՛ առևտրով: Տարածված է եղել նաև բանջարաբուստանային կուլտուրաների մշակումը (աճեցվել է կաղամբ, որն իրացվել է Քութայիսում և Թիֆլիսում), այգեգործությունը, հիմնականում՝ խաղողագործությունը (տարածված էին շուրջ մեկուկես տասնյակի հասնող խաղողի սորտեր, որից պատրաստում էին տարբեր տեսակի գինիներ), մասամբ՝ անասնապահությունը: Գետերին մերձակա բնակավայրերում տարածված էր ձկնորսությունը: 1882թ. Գորի քաղաքում տարածված մասնագիտությունների (հիմնականում՝ արհեստների), առևտրի տարբեր տեսակների ցանկը և դրանցով զբաղվող հայերի և վրացիների թվային պատկերը հետևյալն էր²³³.

ա. աղյուսակ

զբաղմունքի (արհեստի) տեսակը	վրացիներ	հայեր
1. աստղձագործներ	60	15
2. քարագործներ	40	5
3. վարսավիրներ (սափրիչներ)	2	12
4. կաշեգործներ	1	1
5. կոշկագործներ (եվրոպական)	27	3
6. դերձակներ	13	8

²³² Հորիզոն, Թիֆլիս, 1915, N 145:

²³³ *Джавахов А.*, Город Гори (СМОМПК), вып. II, Тифлис, 1882, отд. I, с. 92-93.

գրադմունքի (արհեստի) տեսակը	վրացիներ	հայեր
7. պղնձագործներ	9	11
8. դարբիններ	19	7
9. ներկարարներ (красильщик)	--	4
10. քարտաշներ	5	4
11. հացթուփներ (пурщик)	1	8
12. ներկարարներ (маляр)	5	5
13. բրուտագործներ	13	3
14. աղյուսագործներ	5	7
15. այգեպաններ	32	11
16. կառագործներ (карьерник)	9	3
17. արծաթագործներ	7	5
18. կոշկագործներ (ասիական)	50	7
19. դագաղագործներ	1	1
20. սղոցաքաշներ	50	16
21. պայտարներ	--	5
22. ժամագործներ	--	3
23. զինագործներ	2	--
24. զոռնաչիներ	9	--
25. ջրկիրներ	2	1
26. գդակագործներ	8	7
27. տկագործներ	1	4
28. հրուշակագործներ	4	--
29. կառապաններ	26	8
30. մսագործներ	5	17
31. ջրաղացպաններ	10	1
32. սայլապաններ	40	10
33. հովիվներ	4	3

բ. Աղյուսակ

առևտրի տեսակը	վրացի խանութպաններ	հայ խանութպաններ
1. նպարավաճառներ	25	13
2. բազազներ (գեղեցիկ ապրանքների վաճառողներ)	2	34
3. մանրավաճառներ	7	35
4. դուքանագործներ	27	15
5. ձկնավաճառներ	3	2
6. ծխախոտավաճառներ	--	2
7. ձիթագործներ	--	2
8. մոմավաճառներ	1 (ռուս)	--

Գորեցի Տեր-Ստեփանովին է պատկանել քաղաքի ծայրամասում գտնվող գավառային բանտի շենքը²³⁴:

Գորիի գավառին սահմանակից բնակավայրեր

Գորիի գավառին արևելքից սահմանակից Դուշեթի գավառում²³⁵ ևս հայությունն ունեցել է բավական ներկայանալի թվաքանակ: Գավառի շատ բնակավայրեր՝ **Անանուրը**²³⁶, **Դուշեթը**, **Ախալգորը**²³⁷ և այլն,

²³⁴ Նույն տեղում, էջ 100:

²³⁵ Ըստ համառուսաստանյան 1897թ. առաջին համընդհանուր մարդահամարի տվյալների՝ Դուշեթի գավառում հայության թիվը կազմել է 3177 (լուսավորչականներ և կաթոլիկներ), որից Դուշեթ քաղաքում ապրել է 584, գավառում՝ 2593 հայ (2592 լուսավորչական, 1 կաթոլիկ): Դուշեթ քաղաքի 584 լուսավորչական հայերից 118-ը և գավառի 2592 լուսավորչական հայերից 1426-ը եղել են վրացախոս, գավառից՝ 1-ը օսախոս, 2-ը՝ ռուսախոս, քաղաքից՝ 1-ը ռուսախոս (Первая всеобщая перепись населения Российской Империи, 1897г., издание ЦСК МВД, LXIX. Тифлисская Губерния, СПб., 1905, с. 74, 98):

²³⁶ Գյուղը 1916թ. ունեցել է 100-120 տուն հայ բնակչություն (Արև, Բարու, 1916, N 242):

²³⁷ Ունեցել է երկտեղ ծխական դպրոց (Հորիզոն, Թիֆլիս, 1916, N 254): Ախալգորն ունեցել է 6 հայկական եկեղեցի՝ Սբ Աստվածածին, Սբ Կիրակի, Սբ Լուսավորիչ, Սբ Գևորգ, Սբ Մարինոս, Սբ Հրեշտակապետ: Խորհրդային շրջանում բնակավայրը ներառվել է Հարավօսական Ինքնավար Մարզի մեջ՝ 1934թ. վերանվանվելով Լենինգորի, ներկայումս այն Հարավային Օսիայի Հանրապետության քաղաքներից մեկն է և 1990 թվականից կրկին կրում է նախկին Ախալգոր անվանումը: «Կովկասյան օրացույցի» 1912թ. վիճակագրական տվյալներով՝ նույն թվականին Ախալգորը Դուշեթի գավառի գույտ հայաբնակ գյուղերից մեկն էր՝ 590 հայ ազգաբնակչությամբ (Кавказский календарь на 1912г., Тифлис, 1911, с. 128):

մշակութային-հասարակական կյանքով սերտորեն կապված են եղել Գորի քաղաքի հետ՝ ժամանակի մամուլում շատ դեպքերում հիշատակվելով Գորիի գավառի բնակավայրերի հետ համատեղ²³⁸:

Արևմուտքում գտնվող Քութայիսի նահանգի՝ Գորիի գավառին հարակից Շորապանի²³⁹ և Ռաճայի գավառների բնակավայրերը ևս եղել են հայաշատ: Օրինակ, Շորապանի գավառի մեջ մտնող գեղատեսիլ **Չխար** ավանը շուրջ 100 տուն հայերից (1914թ.) բաղկացած հայաշատ բնակավայրերից էր, ուներ շքեղ եկեղեցի, քարաշեն ուսումնարան (50-60 աշակերտությամբ), ԿՀԲԸ տեղի ճյուղ, գրադարան-ընթերցարան, գյուղական բանկ և այլն (1916թ.)²⁴⁰: Հուզումնալից է նկարագրում թղթակից-ճանապարհորդը Չխարի հայության վիճակը՝ ցավով նշելով այստեղ նույնպես տարածված վիրախոսության մասին: Նույն աղբյուրից տեղեկանում ենք, որ Չխարի դպրոցը 1880-ական թթ. հիմնադրել է Մ.Խրիմյան կաթողիկոսի դպրոցական ընկերը՝ կուստանդնուպոլսեցի հոգևորական Տ. Եղիշե քահ. Գարամաճյանը, որը, պատահամբ ընկնելով այստեղ և տեսնելով տեղի ուժացվող հայության վիճակը, մնացել է, պայքարել հանուն հայերենի տարածման, որի համար *«...որպես կասկածելի անձնատրութին, տանջանքների է ենթարկուել, ազատուել է եւ նորից նոյն եռանդով ու անձանձիր շարունակել իր նախկին գործը...»*²⁴¹:

1873թ. տվյալների համաձայն՝ Չխարում ապրել է 315 հայ (72 տուն)²⁴²: Նույն թվականին Չխարում ապրող իմերեթցիները կազմել են ընդամենը 16 տուն:

²³⁸ Դուշեթի և արևելքից նրան շարունակող Թիանեթի գավառները միասին վերցրած ունեցել են շուրջ 21 հայաբնակ գյուղեր ու ավաններ, որոնցից 11-ն ունեցել են եկեղեցիներ, 4-ը՝ ծխական դպրոցներ (Հայաստանի ազգային ատլաս, հ. Բ, Երևան, 2008, էջ 199):

²³⁹ Ըստ համառուսաստանյան 1897թ. առաջին համընդհանուր մարդահամարի տվյալների՝ Շորապանի գավառում ապրել է 869 հայ (լուսավորչականներ և կաթողիկոսներ), որից 405-ը՝ վրացախոս (Первая всеобщая перепись населения Российской Империи, 1897г., издание ЦСК МВД, LXVI. Кутаисская Губерния, СПб., 1905, с. 86, 118):

²⁴⁰ Հորիզոն, Թիֆլիս, 1914, N 149, Արև, Բաքու, 1916, N 181:

²⁴¹ Նույն տեղում:

²⁴² Списки населенных мест Кавказского края, V выпуск, Кутаисская губерния, Тифлис, 1879 (ցավոք, սույն հատորը ևս չի էջակաված):

Բուն **Քուրայիս** քաղաքում հայերի թիվը կազմել է շուրջ 250 տուն (1916թ.)²⁴³: 1873թ. Կովկասյան վիճակագրական կոմիտեի տվյալներով՝ Քուրայիս քաղաքն ունեցել է 145 տուն հայություն (83 լուս., 62 կաթ.)՝ 521 ընդհանուր բնակչությամբ²⁴⁴: Ըստ համառուսաստանյան 1897թ. առաջին համընդհանուր մարդահամարի տվյալների՝ Քուրայիս քաղաքն ունեցել է 1282 հայություն (լուսավորչականներ և կաթոլիկներ), նույնանուն գավառում (առանց քաղաքի) հայության թիվը կազմել է 86²⁴⁵: Սակայն հարկ է նշել, որ այս հայությունը Ախալցխա-Ախալքալաքից և ցեղասպանություն ապրած Արևմտյան Հայաստանի զանազան վայրերից այստեղ հանգրվանած հայ գաղթականությունն էր: Ինչպես նշում է աղբյուրը՝ տեղի բնիկ հայությունն արդեն վաղուց ձուլված է եղել՝ «*փոխադարձ ամուսնութեամբ, լեզուով, կրօնով, սովորութիւններով*»²⁴⁶: 1873թ. Կովկասյան վիճակագրական կոմիտեի տվյալներով՝ Քուրայիս քաղաքն ունեցել է 2 հայ լուսավորչական եկեղեցի²⁴⁷, երկսեռ ծխական մեկդասյա դպրոց՝ 40-50 աշակերտությամբ (1916թ.)²⁴⁸:

Շուրջ 6 տարի առաջ (1910թ.) ճամփորդած մեկ այլ հեղինակի հաղորդած տեղեկություններով՝ Քուրայիսի հայոց եկեղեցին և նրա բակում գտնվող ծխական երկհարկ դպրոցը գտնվել են Ռիոն գետի եզերքին՝ գեղատեսիլ մի վայրում: Դպրոցն այդ ժամանակ ունեցել է շուրջ 60 աշակերտ և 5 ուսուցիչ: Նույն դպրոցի մեջ գտնվել է ԿՀԲԸ գրադարան-ընթերցարանը՝ մի քանի հարյուր գրքով և 7 օրաթերթով,

²⁴³ Արև, Բարու, 1916, N 181:

²⁴⁴ Списки населенных мест Кавказского края, V выпуск, Кутаисская губерния, Тифлис, 1879.

²⁴⁵ Գավառի լուսավորչական հայերից 6-ը խոսել են վրացերեն, 12-ը՝ իմերեթերեն, 1-ը՝ ռուսերեն, քաղաքի հայությունից 26-ը՝ վրացերեն, 24-ը՝ իմերեթերեն (աղբյուրում նշյալ հայերը նշված են քարթվելական լեզվի իմերեթական ճյուղի տակ), 1-ը՝ մեզրելերեն, 9-ը՝ ռուսերեն (Первая всеобщая перепись населения Российской Империи, 1897г., издание ЦСК МВД, LXVI. Кутаисская Губерния, СПб., 1905, с. 86, 102):

²⁴⁶ Արև, Բարու, 1916, N 181:

²⁴⁷ Списки населенных мест Кавказского края, V выпуск, Кутаисская губерния, Тифлис, 1879.

²⁴⁸ Հորիզոն, Թիֆլիս, 1910, N 144:

ուր, սակայն, վիրախոս լինելու պատճառով գրեթե ոչ ոք չէր այցելում: Հետաքրքրական է նաև, որ Ա.Միքայելյան ստորագրող ճանապարհորդը, ծանոթանալով եկեղեցում պահվող չափաբերական մատյանի հետ՝ որպես վիճակագրական աղբյուրի, նշում է, որ Քութայիսում հայ նորածիններին տվել են բացառապես վրացական անուններ, և միայն վերջին (1906-1910թթ.) տարիներին են, այն էլ խիստ հազվադեպ, հանդիպում հայկական անուններ: Մատյանից տեղեկանում ենք նաև, որ նախորդ տարիներին և տասնամյակներին տեղի հայությունը դրսևորել է քանակական աճման միտում²⁴⁹:

1917թ. փետրվարյան հեղափոխությունից հետո, նույն թվականի ամռանը որոշ փորձեր են արվել՝ կազմակերպելու Քութայիսի հայության մշակութային կյանքը: Այդ նպատակով «Ռ.Ս.Դ.Բ.Կ. հայ անդամները ժողով են ունեցել... Մտածել են, մտածել եւ հինգ հոգուց բաղկացած մի յանձնաժողով են ընտրել», որը և հանձն է առել Քութայիսի հայ հասարակության համար հայերեն և վրացերեն դասախոսություններ կազմակերպել հայոց պատմությունից: Նույն տեղեկության համաձայն՝ տվյալ շրջանում Քութայիսում բացված է եղել Քութայիսի հայկական համայնական գրադարան-ընթերցարանը²⁵⁰:

Մոտ 50 տուն հայ է ունեցել (1916թ.) նաև Քութայիսից 50 վերստ հեռավորությամբ գտնվող **Լայլաջ** ավանը (մտել է Քութայիսի նահանգի Լեչխումի գավառի մեջ)²⁵¹, որը չի ունեցել դպրոց, իսկ հայոց եկեղեցի հայությունը չի հաճախել, հաճախելով վրացականը՝ վիրախոս լինելով և «*ոչինչ չհասկանալով իրենց աղաւաղուած հայ ծիսակատարութիւնից*»²⁵²: 1873թ. տվյալների համաձայն՝ Լայլաջում ապրել է 187

²⁴⁹ Նույն տեղում:

²⁵⁰ Հորիզոն, Թիֆլիս, 1917, N 145:

²⁵¹ Ըստ համառոտաստանյան 1897թ. առաջին համընդհանուր մարդահամարի տվյալների՝ Լեչխումի գավառում ապրել է շուրջ 157 հայ լուսավորչական, որոնցից 6-ը գավառի կենտրոն Ցագերախում (գավառում հայ կաթողիկներ չեն հիշվում): Նշյալ հայ լուսավորչականներից 66-ը եղել են իմերեթախոս, 1-ը՝ վրացախոս (Первая всеобщая перепись населения Российской Империи, 1897г., издание ЦСК МВД, LXVI. Кутаисская Губерния, СПб., 1905, с. 108):

²⁵² Արև, Բարու, 1916, N 191:

հայ (32 տուն)²⁵³: Նույն թվականին Լայլաշում ապրող իմերեթցիները կազմել են ընդամենը 12 տուն: Ճանապարհորդ-թղթակիցն այսպես է բնութագրում Լայլաշի հայությանը. «Մայր երկրից կտրուած, լեզուից ու ազգային բոլոր արժէքներից զրկուած, սգիտութեան մի թանձր ու մթազին խաւարով ծածկած իր սիրտն ու հոգին, Լայլաշցի հայն արդէն ձուլման եւ օտարացման կէս ճամբին կանգնած՝ յուսահատ եւ աղէկտուր հայեացքն է սեւեռել անյոյս կերպով դէպի իր հայրենի հեռաւոր ու դժբախտ հորիզոնները փրկութեան յոյսը աչքերին»²⁵⁴:

Լայլաշից արևելք գտնվող **Օն** ավանում (Քուրայիսի նահանգի Ռաճա գավառի կենտրոնն էր) ևս ապրել են գրեթե նույնքան (մոտ 40) տուն հայեր (1916թ.)²⁵⁵, որտեղ միակ հայերեն մրմնջացողը գյուղի քահանան էր, որն էլ, ըստ հիշատակության, մեծ ճիգեր է գործադրել իր կողմից այլանդակված հայերեն բառերն արտաբերելու համար: ԿՀԲԸ նպաստներով 1913թ. Օնում հիմնված է եղել երկսեռ մեկդասյա եկեղեցական ծխական դպրոց, որն այդ պահին ունեցել է 30-35 սան²⁵⁶: 1873թ. տվյալների համաձայն՝ Օնում ապրել է 59 հայ (14 տուն)²⁵⁷: Նույն թվականին Օնում ապրող իմերեթցիները կազմել են ընդամենը 20 տուն:

Օնից հարավ և Քուրայիսից հետո երկրորդ հայաշատ բնակավայրը **Մաչխերին**²⁵⁸ էր (Շորապանի գավառ), որը 1916թ. ուներ մոտ 90 տուն հայ բնակչություն, ավելի քան 30 տարի առաջ (1883թ.) հիմնված դպրոց²⁵⁹, որն իր խղճուկ գոյությունը պահել է ԿՀԲԸ նպաստների և

²⁵³ Списки населенных мест Кавказского края, V выпуск, Кутаисская губерния, Тифлис, 1879.

²⁵⁴ Արև, Բարո, 1916, N 191:

²⁵⁵ Ըստ համառուսաստանյան 1897թ. առաջին համընդհանուր մարդահամարի տվյալների՝ Օնն ունեցել է շուրջ 1255 բնակչություն, որից հայեր՝ 174, որից 1-ը՝ իմերեթախոս: Օնից բացի 1897թ. դրությամբ Ռաճայի գավառի այլ վայրերում հայեր չեն նշվում (Первая всеобщая перепись населения Российской Империи, 1897г., издание ЦСК МВД, LXVI. Кутаисская Губерния, СПб., 1905, с. 86, 112):

²⁵⁶ Արև, Բարո, 1916, N 193:

²⁵⁷ Списки населенных мест Кавказского края, V выпуск, Кутаисская губерния, Тифлис, 1879.

²⁵⁸ Հորիզոն, Թիֆլիս, 1916, N 286:

²⁵⁹ 1883թ. հիմնադրված դպրոցի առաջին ուսուցիչն է եղել Գասպար Տեր-Գաբրիելյանը, որն արդեն 1913թ. գյուղի քահանան էր (Հորիզոն, Թիֆլիս, 1913, N 226):

տեղի եկեղեցուն պատկանող խանութից ստացվող եկամտի շնորհիվ²⁶⁰: 1873թ. տվյալների համաձայն՝ Սաչխերում ապրել է 200 հայ (38 տուն)²⁶¹: Նույն թվականին Սաչխերում ապրող իմերեթցիները կազմել են ընդամենը 42 տուն:

Ճանապարհորդն այստեղ ևս խոր ափսոսանք է հայտնում՝ տեսնելով Սաչխերի հայության վիրախուս, սեփական արժեքների անհաղորդ, հայի և հայկականի հանդեպ քար անտարբերությամբ լցված լինելը, միաժամանակ փորձում գտնել այս ամենի մեղավորներին. «...Սակայն ո՞վ է մեղավորը... Մեր կուլտուրական բարգաւաճման եւ տարածման նախանձախնդիր հայ ինքնաճանաչ ինտելիգենցիան քաղցր ու վեհ պարտք ունի կատարելու ցաք ու ցրիվ մեր ժողովրդի խորքերում՝ նրան կորստաբեր վիճակից ազատագրելու համար: Սակայն նա այդ իդեալական ուղիո՞ւմն է արդեօք» (նույն տեղում): Գաղութահայ ինտելիգենցիա անվան տակ հողվածագիրը նկատի ունի տվյալ բնակավայրի քահանային և ուսուցչին, որոնք, սակայն, տասնամյակներով ի նպաստ տեղի հայության ազգային առաջադիմության ոչ մի նվաճում չեն գրացել: Այդուհանդերձ, հեղինակը գովեստով է խոսում Սաչխերի երեցփոխ Գրիգոր Խուրդինյանի մասին, որի ջանքերով գյուղի դպրոցն ու եկեղեցին քիչ-քիչ ստացել են կանոնավոր գույն ու կերպարանք: «Վիրահայ ցաւերից» հողվածաշարի վերջին հրապարակման մեջ ճանապարհորդը փորձում է որոնել ուղիներ, որոնք կփրկեին վիրահայությանը մոտալուտ կործանումից: Ելքերից մեկը, ըստ հեղինակի, «Գաղութահայերի մեջ լեզուն վերականգնող ընկերութեան» շուտափույթ կազմավորումն էր, «...որն իր ճիւղերը հաստատի Ռուսաստանի եւ Կովկասի բոլոր անկիւններում, որտեղ որ այդ վտանգը ներշնչող հայ կայ»²⁶²:

²⁶⁰ Արև, Բարու, 1916, N 197:

²⁶¹ Списки населенных мест Кавказского края, V выпуск, Кутаисская губерния, Тифлис, 1879.

²⁶² Արև, Բարու, 1916, N 201:

**Պայքարը վիրախոսության և օտարացման դեմ:
Վրացական շրջանակների հակազդեցությունը**

Թիֆլիսի նահանգի (Թիֆլիսի, Սոնախի, Թելավի, Թիանեթի) և Քութայիսի նահանգի (Լեչխումի, Ջուգոիդի, Սենակի, Քութայիսի, Օգուրգեթի) գավառների, ինչպես նաև խնդրո առարկա Գորիի գավառի ու վերջինիս հարակից Դուշեթի (Թիֆլիսի նահանգ) և Շորապանի ու Ռաճայի (Քութայիսի նահանգ) գավառների հայությունը XIX դ. վերջին²⁶³ և XX դարասկզբին²⁶⁴, չնչին բացառությամբ, վրացախոս էր. «Հայը վաղուց ի վեր այստեղ խօսում, մտածում էլ զգում է օտար լեզուով. նրա հոգեբանությունն անգամ վրացական է. եթե ամեն տեղ հայերը այսպես են գրաւել վրացիների ստացւածքը, եթե նրանք մոռացել են իսպառ իրենց լեզուն ու գրականությունը, պատմական անցեալն ու հայի հոգեբանությունը, չեն ուրախանում մեր յաջողություններով եւ տրտմում մեր ձախորդություններով, ապա ուրեմն աւելորդ է միանգամայն վրաց նեղ ազգայնականների բարձրացրած ճիշն ու աղաղակը, թէ ըստ էութեան եւ թէ ըստ ձեւի»²⁶⁵:

Խնդրո առարկա Գորիի և հարակից բնակավայրերի մտավորականությունը, կրոնական և աշխարհիկ շրջանակները, հասարակական-քաղաքական դասի, կուսակցությունների և հայության կյանքին շունչ հաղորդող այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ, այլ վայրերից այստեղ ժամանած ճանապարհորդներ իրենց թողած գրավոր հիշատակություններում միաբերան աղաղակել են այս դառն իրողության մասին: Վերջիններս, պատկերելով հայության՝ սեփական լեզվից ծայրաստիճան օտարված լինելու ողբերգական վիճակը, առաջարկել են Գորիի գավառի և հարակից բնակավայրերի հայությունը մոտալուտ կործանումից փրկելու մի շարք ելքեր և ուղիներ: Դպրոցների հոգաբարձական խորհուրդների գանազան ժողովների,

²⁶³ Джавахов А., Город Гори (СМОМПК), вып. II, Тифлис, 1882, отд. I, с. 95.

²⁶⁴ Հորիզոն, Թիֆլիս, 1911, N 39:

²⁶⁵ Նույն տեղում, 1914, N 31:

հավաքույթների ժամանակ բազմիցս առաջարկներ են հնչել՝ ավելացնել այս կամ այն դպրոցի բաժանմունքների, դասարանների, ուսուցիչների թիվը, իսկ, օրինակ, Գորիի դպրոցի համար անհրաժեշտ դրամական միջոցների համար դիմել օտարաբնակ գորեցիներին²⁶⁶: Գորիի հայության օտարացման մասին է վկայում, օրինակ, 1910թ. հուլիսի 18-ին տեղի ծխական դպրոցին, «որի խղճալի գոյությունը կախված է եղել մազից», օգնելու նպատակով կազմակերպված հասարակական զբոսանքը, որի ժամանակ հավաքվում է չնչին գումար: Հոդվածագիրը նշում է, որ բացի մի քանի հայախոս ընտանիքներից (որոնք Գորի էին տեղափոխվել վերջին շրջանում), տեղի վիրախոս հայությունը «հիւանդոտ ու սպանիչ անտարբերութեամբ» է լցված եղել ինչպես այս, նույնպես և այլ բազմաթիվ համայնքային միջոցառումների նկատմամբ²⁶⁷: Պարբերաբար անցկացվող գավառային ուսուցչական ժողովներում Գորիի ուսուցչությունը մշտական քննարկման առարկա է դարձրել վիրախոս սերնդին հայերենի ուսուցման, այդպիսով վերջիններիս սեփական ազգային ինքնությունը վերադարձնելու հարցերը: Այդպիսի մի ժողովի ժամանակ, օրինակ, քննարկվել է Էջմիածնի կենտրոնական դպրոցական խորհրդի առաջարկած ծրագիրը, նշվել են թերությունները և առաջարկ է արվել վերանայել ծրագիրը, որի ժամանակ հաշվի կառնվեն նաև օտարախոս (տվյալ պարագայում՝ վիրախոս) վայրերի ուսուցչական շրջանակների կարծիքները²⁶⁸: «Հորիգոնի» թղթակից Հովակը (Հովակիմ Ստեփանյան)²⁶⁹, նկարագրելով Գորի քաղաքի վիրախոս հայության վիճակը, խիստ կարևորում է տեղի դպրոցի դերը հայերենի տարածման և ամրապնդման գործում: Վրացախոս վայրերում, ինչպիսիք են Թիֆլիսը, Գորին, Սղնախը, Թելավը, Դուշեթը, Վլադիկավկազը,

²⁶⁶ Հորիգոն, Թիֆլիս, 1910, N 148:

²⁶⁷ Նույն տեղում, 1910, N 165:

²⁶⁸ Նույն տեղում, 1911, N 90:

²⁶⁹ Հովակիմյան Բ.Մ., նշվ. աշխ., էջ 249:

Հ.Ստեփանյանն առաջարկում է մեկդասյա դպրոցների փոխարեն ունենալ մինչև 4-5-6-դասյա դպրոցներ (բացել II, III, IV դասարաններ), ունենալ նաև նախապատրաստական կամ նախադպրոցական բաժին, որպեսզի հայ երեխան կարողանա հիմնավորապես յուրացնել սեփական լեզուն և հեշտ չմոռանա այն²⁷⁰: Ուսումնասիրելով տվյալ ժամանակի վիրախոս հայերին՝ կարելի է հանդիպել նաև երևույթների, որոնք օգնում են առավել համակողմանիորեն ծանոթանալ տիրող բարոյահոգեբանական մթնոլորտին: Այդ առթիվ հարկ ենք համարում մեջբերել 1915թ.՝ արևմտահայության դեմ եղեռնագործման տարում տեղի ունեցած մի դեպք, որը պատահել է Սուրամի ավագ ուսուցիչ Հ.Դավթյանցի և ԿՀԲԸ Սուրամի ճյուղի նախագահ Յ. ա. ք. Առյուծյանցի հետ: Վերջիններս նույն թվականի աշնանը գաղթական հայության համար դրամ և ցորեն հանգանակելու համար մեկնել են Սուրամից 18-19 վերստ հեռավորության վրա գտնվող **Ատոց** գյուղը: Երբ գործն ավարտում են և հաջորդ գյուղ մեկնելուց առաջ նստում են նախաճաշի, վերջիններիս է մոտենում 80-ամյա զառամյալ մի կին և ցնցոտիների մեջ փաթաթված մի արծաթյա դրամ հանելով մեկնում է տեր-հորն՝ ասելով. *«ես իմացայ, որ հայերի համար դրամ էք ծողովում. իմ ամբողջ կարողությունը սա է, ինդրում եմ, տերտեր ջան, չնեղանաք եւ ուղարկեք իմ այս չնչին լուման ուր հարկն է»*: Այս սրտառուչ պատմությունն ավարտելով՝ Հ.Դավթյանցը եզրակացնում է. *«կրկնում եմ, վրացախօս հայի սրտում ազգային ոգին վառ է, հարկաւոր է միայն բորբոքել...»*²⁷¹:

Թիֆլիսի և Իմերեթի հայոց թեմի, ԿՀԲԸ, այլ կազմակերպությունների, զանազան նվիրատուների, բարերարների միջոցներով բացվող կամ պահվող դպրոցների և լուսավորչական այլևայլ հաստատությունների կողքին 1916թ. թիֆլիսյան մտավորականությունը որոշում է վիրախոս հայերի համար վրացերեն հրատարակել «Սո-

²⁷⁰ Հորիզոն, Թիֆլիս, 1914, N 108:

²⁷¹ Նույն տեղում, 1916, N 94:

մեխթա ցխովրեթա» («Հայկական կյանք») թերթը, որի նպատակն էր վիրախոս հայերին առավել մոտիկից ծանոթացնել հայ կյանքին, գրականությանն ու այդպիսով նրանց մեջ վառ պահել ազգային գիտակցությունը: Արդեն այս քայլը բավական էր, որ առանց այն էլ հայության դեմ անբարյացակամ տրամադրված վրաց հասարակական-քաղաքական, մտավորական շրջանակներն սկսեին նոր արշավ: Վրացական մամուլի էջերը ողողվեցին հայկական կողմի այս և այլ (վիրախոս շրջաններում դպրոցների բացում և հայկականության տարածմանն ուղղված այլ քայլեր) գործողությունները խստորեն քննադատող հոդվածներով: Վրաց հոդվածագիրները նշում էին, որ հայերը, փոխանակ իրենց ուշադրությունը դարձնեն դեպի իրենց կործանվող Արևմտահայաստանը, փոխանակ մեկնեն Շիրակի ու Ապարանի գյուղեր՝ խավարի ու տգիտության մեջ տառապող հայրենակիցներին դուրս բերելու այդ վիճակից, իրենց աչքը տնկել են Վրաստանի գյուղերին²⁷²: Վրացական «Սաքարթվելո», «Սախալխո Փուրցելի» ազգայնաշունչ թերթերը կրկին առաջ քաշեցին այսպես կոչված «վրաց գրիգորյանների» կեղծ թեզն ու հանդես եկան վերջինիս պաշտպանությամբ: Խնդիրն այն էր, որ թիֆլիսյան և քութայիսյան գավառների վիրախոս հայությունը վրացական շրջանակներում համարվում էր լուսավորչական («գրիգորյանական») հավատքին հետևորդ ազգությամբ վրացի (շատ դեպքերում զուգահեռներ էին տարվում մուսուլման աջարների և «վրացի գրիգորյանների» միջև՝ երկու կողմին էլ համարելով վրաց ուղղափառությունից հեռացած վրացիներ): Ահա, խոսելով վրացերեն հրատարակվելիք հայկական թերթի մասին՝ «Սաքարթվելոն» նշում է, որ այդ լրագրի նպատակն է լինելու *«հայ խոսքն ու գործը փաթաթել այն մարդկանց գլխին, որոնք բավական թվով ապրում են մեզանում և միացած են «Հայաստանի»* (չակերտները վրացական թերթինն են՝ Վ.Ս.) *գավակներին մի-*

²⁷² Արև, Բաքու, 1916, N 289:

միայն կրոնով», նշում է վրացի հոդվածագիրն՝ ավելացնելով, որ թերթի խնդիրն է «...թե՛ խոսքով և թե՛ իրականության մեջ ամեն կերպ աշխատել հայացնել վերջնականապես վրացի գրիգորյաններին»²⁷³: Խոսելով այդ շրջանում շուրջ 7 վիրախոս գյուղերում դպրոցներ բացելու հայ բարերար Աֆրիկյանի մտադրության մասին՝ «Սաքարթվելոն» խոսում է մի ուշագրավ փաստի մասին. «...վրացական թերթերը ակնհայտ փաստեր և օրինակներ են բերել՝ ասելով, որ **Ավալիշվիլիները, Ալիսազիշվիլիները, Բարաթաշվիլիները, Բաքրաձենները, Բասիլիշվիլիները, Դալաթիշվիլիները, Գուլիաշվիլիները, Մամուլաշվիլիները, Ղարիբաշվիլիները, Մամայաշվիլիները, Մաչաբեղիները, Թարխնիշվիլիները, Մեսիլիշվիլիները, Օամալաշվիլիները, Շավարդենաձենները և հազարավոր այլ տոհմեր** (ընդգծումը մերն է՝ Վ.Ս.) վրացիներ են, որ նրանց կրոնական դավանանքն է միայն գրիգորյանական, մնացած բաներով՝ լեզվով, վարքով ու բարքով, սովորույթներով և աղաթներով եղել են վրացիներ...», նշում է թերթն ու ավելացնում, որ իր քայլով պ.Աֆրիկյանը ցանկանում է նորից հայկական միջավայր տանել վրաց գրիգորյանական հավատով ապրող վրացիներին²⁷⁴: Կարևորագույն այս հրապարակումից տեղեկանում ենք, որ առնվազն այս ազգանվամբ տոհմերը XX դարասկզբին եղել են լուսավորչական («գրիգորյանական») հավատքի, այն է՝ վիրախոս հայկական համայնքի ներկայացուցիչներ²⁷⁵: Վիրախոս հայության կամ վրացական կող-

²⁷³ Նույն տեղում, 1916, N 290:

²⁷⁴ Նույն տեղում:

²⁷⁵ Անգեն աչքով էլ դժվար չէ տեսնել նշյալ ազգանուններում հայկական արմատների առկայությունը: «Սաքարթվելոյի» հոդվածագիրն այս հրապարակումն ավարտում է իր համար «հոռետեսական» եզրահանգմամբ. «Եվ դուք կտեսնեք՝ շատ մոտիկ ապագայում Կարալեթին, Ջերթին և Չեզվին (Գորիի գավառի հայաբնակ գյուղեր: Հենց վերջիններիս հիշատակումից հնարավոր է ենթադրել, որ վերոբերյալ ազգանվանափոխության ենթարկված վիրախոս հայկական տոհմերից շատերն ապրել են հենց այս գյուղերում՝ Վ.Ս.), Բարթլիի լավագույն գյուղերի շվիլիներն ու ձեները բոլորը կհեռանան մեզանից, իսպառ մոռացության կտան վրաց լեզուն, մեր սովորույթն ու բարքը, և մեր որդիներն, օտարացած մեզանից, կապրեն Վրաստանի սրտում՝ ընդհանուր թելի ներդաշնակ կծիկը կտրած, անջատված: Ճշմարիտ, որ Աֆրիկյանը մի գործնական քայլով քանդեց ու ավերեց մեր պապերի աշխատանքը...» (Արև, Բաքու, 1916, N 290):

մի հորջորջած «վրաց գրիգորյանների» հետզհետե ծավալվող թեման վրացական շրջանակների համար այն աստիճան անհանգստացնող է դառնում, որ «Սամշոբլո» վրացական թերթի խմբագրությունը, ցանկանալով *«հուժկու հարված հասցնել»* հայկական կողմին, բաց նամակ է հղում վրաց հայտնի գործիչներից մի քանիսին՝ **Ա.Մերեթելի-Թումանիշվիլուն** (իշխ. Գ.Մ. Թումանյանի քույրը, վրացական մանկական «Ջեջելի» շաբաթաթերթի խմբագիր), **Գր.Գվեսելեանուն** (քութայիսցի հայ, հայտնի հրապարակախոս, «Չվենի մեգոբարի» թերթի աշխատակից), **Բեգ. Ախոսպիրեուն** (Աղամյանց, թելավեցի հայ, հայտնի բանաստեղծ), **Ի.Գրիշաշվիլուն** (*Մամուլով*²⁷⁶, խարփուխեցի (Թիֆլիսի թաղամաս) հայ, առաջնակարգ երիտասարդ բանաստեղծ)²⁷⁷, և խնդրում հանդես գալ հստակ հայտարարությամբ՝ հա՞յ են իրենք, թե՞ վրացի: Անցնում է շուրջ կես տարի, և ոչ մի արձագանք: Այդժամ «Սամշոբլոն» հանդես է գալիս վերոնշյալ գործիչների հասցեին հայհոյախառն մի հոդվածով՝ *«Ձայն հանեցեք»* խորագրով, նշելով, որ *«...նրանք մեզ մոտ կոկոռում են, իսկ ուրիշ տեղ ձու են ածելու...»*²⁷⁸:

Վրացական մեկ այլ՝ «Թեստրի դա Ցխովրեբա» («Թատրոն և Կյանք») թերթում ևս, Իվ.Գոմարթելու հեղինակությամբ լույս է տեսնում մի հոդված, ուր հեղինակն անխնա քննադատում է Գորիի հայկական կազմակերպություններին՝ նշելով, որ Գորիում բացվել է մի կոմիտե (նկատի ունի Գորիում այդ ժամանակ բացված «Հայ գրասերների խմբակը»), որի նպատակն է հայացնել վրացի գրիգորյաններին²⁷⁹: Շարունակելով՝ վրացի հոդվածագիրը բարկացած նկատում է, որ *«...եթե նախկինում Գորիի եկեղեցիներում եկեղեցական արարողությունները տարվում էին վրացերեն, այժմ դրանք կոմիտեի շնոր-*

²⁷⁶ *Мамулов С.*, Армяне в Грузии, Москва, 1995, с. 131.

²⁷⁷ Հորիզոն, Թիֆլիս, 1916, N 253:

²⁷⁸ Նույն տեղում:

²⁷⁹ Նույն տեղում, 1916, N 179:

հիվ հայերեն են, իսկ բոլոր մեր նախկին **Ակոփաշվիլիները, Տերտերաշաշվիլիները, Թաթուլաշվիլիները, Լոդաձենները, որոնք իրենց վրացիներ էին համարում, այժմ Ակոփյանց, Տերտերյանց, Թաթուլյան, Լոդաձյան են դարձել...**»²⁸⁰: Վրաց հողվածագիրն առաջարկում է ակտիվ կռիվ տալ՝ հանուն «վրաց գրիգորյանների», տարածել վերջիններիս մեջ վրաց գիրն ու գրականությունը, տպագրել գրքուկներ, անել այնպես, որ եկեղեցիներում ևս վրացերեն տարվեն արարողությունները, զարկ տալ փոխադարձ ամուսնություններին և այլն²⁸¹: Համանման հրապարակմամբ է հանդես գալիս «Սախալխո Փուրցելու» մեկնաբան Պ.Միրինաշվիլին՝ ավելի խորացնելով ասելությունը վիրախոս շրջանակներում կրթական-լուսավորչական աշխատանքներ տանող հայերի հանդեպ, վերջիններիս տալով յուրօրինակ «արմենիֆիկատոր» կոչումը. «Մինչև այսօր ռուսիֆիկատորներն ու պանթուրքիստներն էին աշխատում վրացիներին այլասերել և կտրել նրանց իրենց ազգից, այժմ պակասը լրացնում են հայ ազգասերները: Քանի որ մեր ժողովրդի ապաքախոս իրականությունն էլ նպաստում է, տրամաբանական և պատմական փաստերը նրանք հաշվի չեն առնում և որտեղ տեսնում են Գրիգոր Պարթևի հետևողների, կամ գրիգորյանների, ըստ իրենց լուսավորչական, բոլորին հայ, գտարյուն հայ են համարում... Գրիգորյան մասսան Վրաստանում այնպիսի վրացի է, ինչպես այլ կրոնների վրացիները: ...Նրանց (խոսքը հայ գործիչների մասին է՝ Վ.Ս.) շնորհիվ է, որ երեկվա **Թումանիշվիլիները, Խատիսիշվիլիները, Խուցիշվիլիները և Գձերիշվիլիները դարձել են Թումանյանց, Խատիսյանց, Խուցյանց և Գձեյանցներ**»²⁸²:

Վիրախոս հայության խնդրով մամուլի էջերում սրտառուչ հրապարակումներով է հանդես եկել 1915թ. Վանից Թիֆլիս տեղափոխ-

²⁸⁰ Նույն տեղում:

²⁸¹ Նույն տեղում, 1916, N 168:

²⁸² Նույն տեղում, 1916, N 132:

ված անվանի մտավորական, արձակագիր Ծերուն Թորգոմյանը²⁸³: Վերջինս դեմ է հանդես գալիս հայ մտավորականության՝ վրացերեն «Սումեխթա ցխովերբա» («Հայկական կյանք») թերթի հրատարակման նախաձեռնությանը, «...որովհետև, նախ՝ այդպիսին աւելի ու աւելի զարկ կուտայ վիրախօսութեան զարգացման եւ կը մեռցնէ հայերէն սովորելու բաղձանքը. երկրորդ՝ օտար լեզուով գրված որեւէ բառ այնքան խորապէս չի կարող ազդել ու զարթեցնել ազգային զգացումը, որքան մայրենի լեզուով. երրորդ՝ որ վիրախօս հայերու մեծամասնութիւնը վրացերէն գրել ու կարդալ չի հասկնար»²⁸⁴: Վիճակը շտկելու համար Ծ.Թորգոմյանն առաջարկում է ազատվել մի շարք բնակավայրերում առկա պորտաբույծ հոգևորականությունից, փոխարինել բանիմաց և կազմակերպական շնորհքով օժտված քահանաներով, ավելացնել դպրոցների քանակը՝ համալրելով ոչ թե վիրախոս, այլ ընդհակառակը, վրացերեն չիմացող ուսուցիչներով, քանի որ դա կստիպի երեխաներին խոսել հայերեն, Գործում բացել միջնակարգ դպրոց կամ պանսիոնատ և այլն:

Հարկ է նշել, որ Գործի վիրախոս հայության շրջանում կազմակերպական աշխատանքներ տանելուն մեծապես խոչընդոտում էր նաև տեղի մի շարք քահանաների «տգէտ, որկրամոլ, ծայրայեղ փառասէր, քելեխակեր»²⁸⁵ լինելը: Այդպիսիներից էր Սուրամի վրացախոս հայ գաղութի երկրորդ ծխատեր Ներսես քահանա Տեր-Պետրոսյանը, որը 8-9 տարի շարունակ սուրամցի հայ ծնողներին համոզել է, որ իրենց երեխաներին տանեն ոչ թե ծխական²⁸⁶, այլ մինիստրական դպրոց կամ Միխայլովոյի գիմնազիան:

²⁸³ «Հայաստանի սրտէն փրթած՝ ինձի պէս մէկուն յամար ինչքա՞ն դժուար եւ կսկծալի է տեսնել կուլտուրական եւ իմացական հզօր ցեղի մը բեկորներու այս խղճալի կացութիւնը», - նշում է հայրենանվեր մտավորականը (Սրբ, 1916, N 105):

²⁸⁴ Սրբ, 1916, N 105:

²⁸⁵ Հորիզոն, Թիֆլիս, 1916, N 144:

²⁸⁶ Որտեղ սովորելով հայերեն, ըստ քահանայի, երեխաները շատ-շատ ընդունվեն Ներսիսյան դպրոց: Ինքը լինելով կրոնուսույց նշյալ մինիստրական դպրոցում և Միխայլովոյի գիմնազիայում՝ այնտեղ էր մղում հայ մանուկներին՝ սեփական պաշտոնին մնալու համար:

Հետաքրքրական է և միաժամանակ օրինաչափ, երբ «վրաց գրի-գորյանական» շինծու թեզին զուգահեռ՝ վրացական միջավայրում ձևավորվել էին նաև համանման, «քույր» թեզեր, որոնցից հատկա-նշականը «վրացի հրեաներ» կամ «իսրայելացի վրացիներ» կոչվածն էր, որի միջոցով անխնա պայքար էր տարվում, որպեսզի «հիմնավոր-վի» Թիֆլիսում, Քութայիսում և այլ վայրերում ապրող վրացախոս հրեաների «վրացի» լինելը. *«Ինչպես գիտական հետազոտություններն ու իրականության հետ մոտիկից ծանոթանալը մեզ համոզեցին, իս-րայելացիները (խոսքը վրացախոս հրեաների մասին է՝ Վ.Ս.) նույն-քան հրեա կարող են համարվել, որքան աջարացի վրացի մահմեդա-կանները՝ արաբ, գրիգորյան վրացիները՝ հայ, կաթոլիկ վրացիները՝ ֆրանսիացի, իտալացի և այլն»*²⁸⁷, - նշում է «Մաքարթվելոն»՝ ավելաց-նելով, որ իբր անթրոպոլոգիան է ապացուցել իսրայելացի և Վրաս-տանի բնիկ վրացիների միևնույն ցեղին պատկանելը: Թերթը միաժա-մանակ լուտանքներ է թափում օտար «սիոնիստների» հասցեին, որոնք, ըստ թերթի, չեն խնայում ոչ փող, ոչ մարդիկ, որպեսզի իսրա-յելացիներին բաժանեն Վրաստանից: Հավելենք նաև, որ ըստ 1926թ. Խորհրդային Միության առաջին մարդահամարի տվյալների, 20.583 «վրացական հրեաներից» սեփական լեզվով հաղորդակցվել է ընդա-մենը 211 հրեա, մնացյալը սեփականել են վրացերենը²⁸⁸:

Վրացական շրջանակներում բացառապես վրացիներ են համար-վել նաև Թիֆլիսի և Քութայիսի նահանգների տարբեր գավառներում ապրող ինչպես թուրքախոս և վրացախոս, այնպես էլ հայախոս հայ կաթոլիկները: Այսպես, 1915թ. «Սախալխո Փուրցելու» հողվածագիր-հետազոտող ոմն Մեսխի Կ.Գվարամաձե, ձգտելով լրացնել իրենից

²⁸⁷ Հորիզոն, Թիֆլիս, 1917, N 129:

²⁸⁸ Закавказское Центральное Статистическое Управление, Население Закавказья, Всесоюз-ная перепись населения 1926г., краткие итоги, Тифлис, 1928, с. XII.

առաջ հրատարակված մեկ այլ հետազոտողի գործը, թերթի 298-րդ համարում տալիս է «*վրաց կաթոլիկների առավել ամբողջական ցանկը*»²⁸⁹:

Գորեցի նշանավոր հայերը

Գորի քաղաքում կամ համանուն գավառում են ծնվել հայ մի շարք նշանավոր գործիչներ, որոնց շարքում կուզեինք առանձնացնել **Էդվարդ Միրզոյանին** (12.V.1921թ., Գորի - 05.X.2012թ., Երևան, կոմպոզիտոր, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ (1981թ.), **Վանո Մուրադեւուն** (**Հովհաննես Մուրադյան**, 24.III.(06.IV).1908թ., Գորի - 14.VIII.1970թ., Տոմսկ, կոմպոզիտոր, դիրիժոր, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ

²⁸⁹ Հորիզոն, Թիֆլիս, 1915, N 153: «Հետազոտող» Գվարամաձեն, իր խոսքերով, մասամբ օգտվել է կաթոլիկների առաջնորդ Տեր-Աբրահամյանի ցանկ-օրացույցից, մասամբ էլ անձնական հետախուզումներից: Կաթոլիկների վերաբերյալ նշյալ արժեքավոր վիճակագրությունը ստորև մեջբերում ենք ամբողջությամբ՝ միաժամանակ հավելելով, որ վրացի հեղինակի կողմից գրչի մի հարվածով Անդրկովկասի կաթոլիկներին բոլորին անխտիր վրացի ներկայացնելու անհեթեթ փաստին հարկավոր է մոտենալ խիստ զգուշորեն. «...արդ, ստորև թվարկած բոլոր գյուղերում և քաղաքներում ապրող կաթոլիկները ոչ թե հայեր են, այլ, սակավ բացառությամբ, վրացի կաթոլիկներ», - նշում է վերջինս. «Ախալցխայի գործակալության մեջ. Ախալցխայում՝ 2264 հոգի, նրա գավառում՝ Ուղե գյուղում՝ 2220 հոգի, Վալե գյուղում՝ 1070 հոգի, Արալ գյուղում՝ 675 հոգի, Աբասթուման՝ 154 հոգի, Բոլաջուր՝ 71 հոգի: Ախալցխայի գավառում խոսում են վրացերեն լեզվով ընդամենը՝ 6450 հոգի: Ախալքալաքի գործակալության մեջ՝ Խզաբավրա գյուղում՝ 2130 հոգի, Վարզավում՝ 185 հոգի, Բնեյաում՝ 47 հոգի, Սկրա կայարանում՝ 105 հոգի, Սանավարզո (Կախեթում)՝ 195 հոգի, Միխայլովո կայարանից մինչև Բաթում՝ 500 հոգի, ընդամենը՝ 3162 հոգի վրացախոսներ են, Կարտիկամ գյուղում՝ 1573 հոգի, Տուրցխ՝ 800 հոգի, Խուլգումո՝ 556 հոգի, Թիթոխարաբա՝ 480 հոգի, Բավրա՝ 481 հոգի, ընդամենը՝ 3890 հոգի թուրքախոսներ են: Ուրեմն Ախալքալաքի գործակալության մեջ բոլորը՝ 3162+3890=7052 հոգի, Ախալցխայի և Ախալքալաքի գավառներում ընդամենը 9616 վրացախոս և 3102 թուրքախոսներ վրացի կաթոլիկներ են: Իսկ ստորև հիշատակելի Արդվինի և Կարսի գործակալության մեջ ապրողները՝ 8112 հոգի, խոսում են հայ-վրացերեն խառը լեզվով: Արդվինի գործակալության մեջ. Արդվինում՝ 3858 հոգի, Արտանուճում՝ 1329 հոգի, Տանձուտում՝ 40 հոգի, Սաթլելում՝ 383 հոգի, Փխիկուրայում՝ 119 հոգի, Մամանեյիսում՝ 137 հոգի, Բաթումում՝ 946 հոգի, ընդամենը՝ 6807 հոգի վրացի կաթոլիկներ են: Կարսի գործակալության մեջ. Արդահան՝ 502 հոգի, Սասաղիլո՝ 272 հոգի, Ուրի՝ 39 հոգի, Օլթի, 268 հոգի, Օլորի՝ 64 հոգի, Սարիդամիշ՝ 121 հոգի, Կաղզվան՝ 33 հոգի, ընդամենը՝ 1305 հոգի վրացի կաթոլիկներ են: Հայ-վրացական տիրիկոնի վրա է ընդամենը 21618 հոգի, որից վրացախոսներ են 9616 հոգի, թուրքախոսներ՝ 3890, հայ-վրացերեն խառը լեզվով խոսողներ՝ 8112 հոգի: Բացի այս, հայ կաթոլիկների տիրիկոնի վրա եղած վրացի կաթոլիկներից, Վրաստանում կան նաև վրացի կաթոլիկներ, որոնք ենթարկվում են Սարատովի լատին-կաթոլիկների տիրիկոնին. Թիֆլիսում՝ 3263 հոգի, Գորիում՝ 209 հոգի, Քուրայիսում՝ 2059 հոգի, Բաթումում՝ 1032 հոգի, Ախալցխայում՝ 309 հոգի, ընդամենը՝ 6872 հոգի վրաց կաթոլիկներ, լատինական ծեսի վրա են»:

(1968թ.), համաձայն որոշ տեղեկությունների՝ վերջինիս արմատները հասնում են Ջավախքի Տաբաթուր գյուղ, երիտասարդ հասակում, լինելով ջերմեռանդ ստալինիստ և ձգտելով սեփական ազգանվան վերջավորության հնչողությունը մոտեցնել Ստալինի ազգանվան հնչողությանը (Ջուղաշվիլի), դառնում է Մուրադելի), **Սիմոն Տեր-Պետրոսյանին** (15(27).V.1882թ., Գորի – 14.VII.1922թ., Թիֆլիս, կուսակցական մականունը՝ **Կամո**, հեղափոխական գործիչ, հայտնի բուշնիկ, ընդհատակյա կուսակցական կազմակերպիչ, 1982թ. մինչև ԽՍՀՄ փլուզումը Գորիում գործում էր Կամոյի թանգարանը), **Դավիթ Պողոսյանին** (ծնվ. 21.VIII.1974թ., Գորի, ըմբիշ, Վրաստանի բազմակի, Եվրոպայի երկակի (1997, 1998թթ.) չեմպիոն, աշխարհի առաջնության մրցանակակիր (2001թ.), պարզևատրվել է Պատվո շքանշանով (1998), **Զ.Անտոնովին** (XIX դարի հայտնի դրամատուրգ), **Ն.Ազիանուն** (Դանդուրովա, XIXդ. վերջի և XXդ. սկզբի հայտնի դրամատուրգ), **Դ.Խուստույաշվիլուն** (Տեր-Պետրոսյան, Ս.Տեր-Պետրոսյանի (Կամո) քույրը, 1927-1936թթ.՝ Վրացական ՍՍՀ Առողջապահության Ժողկոմի տեղակալ, համատեղության կարգով՝ ՎՍՍՀ Պետապահովագրության ղեկավար, 1934-1936թթ.՝ Մոր և մանկան վարչության ղեկավար, վերջինիս գործունեության շնորհիվ ՎՍՍՀ-ում բացվել են տասնյակ բուժհաստատություններ, հանգստյան տներ և այլն), հայտնի իշխանական տան ներկայացուցիչներ **Բեգթաբեգովներին** (սույն իշխանական տոհմը բնակվել է Անիում, այնուհետև վերաբնակվել Գորիում, հայրենական կալվածքները գտնվել են Գորիի գավառի **Վաղա** հայկական գյուղում, Բեգթաբեգովներն ունեցել են իրենց տոհմական զինանշանը, որտեղ պատկերված է եղել նիզակով հեծյալ)²⁹⁰:

²⁹⁰ Российская родословная книга, часть III, СПб., 1856, с. 479-480.

Ամփոփում

Մենք փորձեցինք ուրվագծել Ցարական Ռուսաստանի Թիֆլիսի նահանգի Գորիի գավառի և հարակից մի քանի բնակավայրերի հայության թվաքանակը, տեղաբաշխվածությունը, ժողովրդագրական տեղաշարժերը, մշակութային, կրոնական, սոցիալական, հասարակական-քաղաքական կյանքը XIXդ. վերջի և XXդ. սկզբի ժամանակավիուլում: Բերված տվյալներից և վկայություններից պարզորոշ է, որ նշված շրջանում Գորիի հայության առաջնային և հիմնական մարտահրավերը մայրենի լեզվի մոռացության, այդպիսով՝ օտարացման և ուժացման խնդիրն էր: Նկատվեց նաև, որ հայերենի տարածման օջախները եղել են ծխական դպրոցները և որոշակի ժամանակահատվածներում հասարակական-քաղաքական-կուսակցական կազմակերպությունների հարկի տակ գործած միությունները, գրադարան-ընթերցարանները, այլ օջախներ: Դժբախտաբար, այս ամենը ևս կարճատև կյանք ունեցավ. շուտով հաստատված խորհրդային հասարակարգում վերացան եկեղեցիները, հետևաբար նաև՝ ծխական դպրոցները: Իսկ ստալինյան-բերիական պատմափուլն էլ ավելի մեծ թափ հաղորդեց Խորհրդային Վրաստանի ինչպես Գորիի, այնպես էլ Թիֆլիսի, Դուշեթի, Թիոնեթի, Թելավի, Սղնախի և այլ գավառների հայության ուժացման գործընթացին: Ժամանակաշրջան, երբ, «աղբբեջանցի» նոր ազգության ստեղծմանը համահունչ²⁹¹, քարթվելացվեցին կամ մեկ տիտղոսի՝ «քարթվելի» տակ մտցվեցին (վրացացվեցին կամ պաշտոնապես հաշվառվեցին վրացիներ) հնդեվրոպական և իբերոկովկասյան լեզվաընտանիքներին պատկանող մի շարք ազգեր և ժողովուրդներ, որոնք, ինչպես նկատեցինք վերևում, ցարական ժամանակաշրջանի փաստաթղթերում նշվել կամ հաշվառվել են որպես առանձին էթնիկ հանրույթներ: Խորհրդային ղեկավարությունը Վրաստանի քարտեզը մեծ մասամբ ներկեց մեկ՝ քարթվելական կամ վրացական գույնով: Այս գույնով ներկվեցին նաև վիրախոս հայության զբաղեցրած բնակավայրերը:

²⁹¹ Առավել մանրամասն տե՛ս *Варданян Т.*, Азербайджанцы: история одного незавершенного этнопроекта, М., 2012.

Ավելի մանրակրկիտ քննարկման հարց համարելով խնդրո առարկա գավառի հայության պատմության խորհրդային ժամանակափուլը՝ նշենք, որ, տիրող համընդհանուր մթնոլորտին համահունչ, Խորհրդային Վրաստանի հայության մի սովոր հատված միջնակարգ կրթություն ստացավ ռուսական դպրոցներում, իսկ ահա հետխորհրդային շրջանում հակառուսական տրամադրությունների պայմաններում իրար հետևից փակվող ռուսական դպրոցները հայության դեռևս գոյատևող հատվածներին ևս վերջնականորեն նետեցին վրացական դպրոցների գիրկը: Ռուսական դպրոցներ հաճախող Գորիի գավառի²⁹² հայության վերջին բեկորները ևս հայտնվեցին մշտապես առկա ուժացման գործընթացի վերջնահանգրվանում: Նշյալ գործընթացը տարածվեց և՛ տեղի, և՛ այս ընթացքում Ջավախքից ու այլ վայրերից Գորիի գավառի տարբեր շրջաններ տեղափոխված հայության վրա: Օրինակ, Բակուրիան ավանի հոծաբնակ հայության երեխաները, որոնք ռուսական դպրոցի փակումից հետո հաճախում են վրացական դպրոցներ, այժմ գրեթե ամբողջովին տարրալուծվել են վրացական միջավայրում: Դժվար էր միանշանակորեն ռուսական դպրոցները համարել վրացականացման հորձանքի պատճեն, այնուամենայնիվ, այն միջոց էր, որով սեփական լեզվին չտիրապետող հայության այդ հատվածը տարբերվում էր վրացիներից, որով էլ՝ ինչ-որ տեղ գերծ էր մնում վերջնական տարրալուծումից: Հետխորհրդային շրջանում ռուսական դպրոցների հետ մեծ թափով վերանում է նաև հայության նշյալ հատվածի այս «տարբերակիչ» գործոնը:

Գորիի գավառի հայության շրջանում հետագայում տեղի ունեցած էթնոժուլման ահեղ գործընթացի մասին պատկերացում կազմե-

²⁹² Խորհրդային շրջանում (1922թ.) ձևավորվեց Հարավային Օսիայի Ինքնավար Մարզը, որի կազմի մեջ այլ շրջանների հետ ներառվեց նաև Գորիի գավառի հյուսիսային գավառամասը, որը ներառում էր Մեջրիսիսի, Սուրամի և Յիսինվալի տեղամասերի մի շարք հատվածներ: Ինքնավար մարզի մեջ ներառված նշյալ հատվածների հայության թիվը 1886թ. կազմում էր 750: Ինքնավար մարզի մեջ ընդգրկվեցին նաև Գորիի հարևան Դուշեթի գավառի Բագալեթի և Քսանի տեղամասերից որոշ հատվածներ (հայության թիվն այստեղ 1886թ. դրությամբ կազմում էր 607), ինչպես նաև հատվածներ Քութայիսի նահանգի Շորապանի գավառի, Սաչխերի և Ռաճայի գավառի Օնի տեղամասերից (նշյալ հատվածներում հայությունը բացակայում էր) (<http://www.ethno-kavkaz.narod.ru/rnsossetia.html>):

լու համար ցույց տանք 2002թ. Վրաստանի մարդահամարի արդյունքները, որոնց համաձայն՝ Ստորին (Շիդա) Քարթլի կոչված նահանգի 4՝ Գորիի, Կասպի, Քառելի և Խաշուրի շրջանների²⁹³ հայության թիվը կազմում էր ընդամենը 3521²⁹⁴: Սա՝ այն պայմաններում, երբ 1886-1914թթ. Գորիի գավառի հայությունն աճել է 38,14%-ով, իսկ տարեկան աճը կազմել է 1,36%²⁹⁵: Աճման առավել մեծ տեմպեր է գրանցել հասկապես Գորի քաղաքի հայությունը՝ նույն 1886-1914թթ. համար գրանցելով 140,0%, այստեղ տարեկան աճը կազմում է 5%: Ինչպես տեսանք, Գորիի գավառի՝ Հարավօսական ԻՄ կազմում ներառված տարածքներում հայության թիվը մեծ տոկոս չէր կազմում (1886թ.՝ 750 կամ գավառի հայ ազգաբնակչության 4,1%-ը): Հետևաբար, ԻՄ հայության թիվը 2002թ. հաշվարկների մեջ չներառելը²⁹⁶ մեզ այնքան էլ չի խանգարում պատկերացում կազմել ժողովրդագրական այն տեղաշարժերի մասին, որոնք տեղի են ունեցել Գորիի գավառում: Հետաքրքրական մի փաստ ևս. 2002թ. մարդահամարի արդյունքում՝ Շիդա Քարթլիի հայ լուսավորչականների թիվը նշվում է 399³⁹⁷: Էական փոքր թիվ՝ համեմատած հայության պաշտոնական՝ 3521 թվի հետ: Պատճառները պարզելու խնդիր այստեղ ևս կա: 2002թ.

²⁹³ Այս 4 շրջանները ձևավորվել են նախկին Գորիի գավառի մեծագույն հատվածի վրա, գավառի հյուսիսային, փոքրագույն հատվածը, ինչպես նախորդ ծանոթագրության մեջ մանրամասնեցինք, մտել էր Հարավօսական Ինքնավար Մարզի մեջ: Հետխորհրդային շրջանում, 1990-ական թթ. կեսերին, Վրաստանի մարզային բաժանման արդյունքում նշյալ 4 և Հարավօսական ԻՄ կենտրոնական մի քանի շրջանների հենքի վրա կազմավորվեց Շիդա Քարթլի նահանգը: Հավելենք, որ մինչև օրս Վրաստանի փաստացի տիրույթը տարածվում է միայն Գորիի, Կասպի, Քառելի և Խաշուրի շրջանների վրա:

²⁹⁴ http://www.geostat.ge/cms/site_images/_files/english/census/2002/03%20Ethnic%20Composition.pdf.

²⁹⁵ *Իշխանեան Բ.*, նշվ. աշխ., էջ 226:

²⁹⁶ Նշենք, որ ԻՄ-ում տարբեր պատճառներով հայերի աճ տեղի չի ունեցել, հակառակը՝ այդ թիվը նվազել է՝ կազմելով. 1374 (1926թ.), 1537 (1939թ.), 1555 (1959թ.), 1254 (1970թ.), 953 (1979թ.), 984 (1989թ.), հետխորհրդային հետագա տարիների տվյալներ չկան մեր ձեռքի տակ:

²⁹⁷ http://upload.wikimedia.org/wikipedia/commons/5/5b/POPULATION_BY_RELIGIOUS_BELIEFS.pdf.

մարդահամարի արդյունքում Վրաստանի պետական վիճակագրական դեպարտամենտի հրատարակած և Վրաստանի գյուղական ազգաբնակչությունը ներկայացնող ստվարածավալ հատորում²⁹⁸ տեղ գտած Գորիի, Կասպի, Քարելի և Խաշուրի շրջանների գյուղերի շարքում բնավ հիշատակություն չկա հայերի մասին. մեզ արդեն ծանոթ և մինչ XX դարասկիզբը երբեմնի հայաբնակ բոլոր գյուղերը ներկայացված են որպես մարդաշատ, 98, 99, 100%-ով վրացաբնակ գյուղեր²⁹⁹: Այդպիսիներից կուզենայինք առանձնացնել մեզ արդեն ծանոթ և երբեմնի հայաբնակ **Կարալեթը** (Գորիի շրջ., 4501 շունչ, 98% վրացաբնակ), **Տոլիավը** (Գորիի շրջ., 2845 շունչ, 99% վրացաբնակ), **Քվախրելը** (Գորիի շրջ., 2374 շունչ, 99% վրացաբնակ), **Նադարբազը** (Գորիի շրջ., 269 շունչ, 91% վրացաբնակ), **Ախալքալաքը** (Կասպի շրջ., 1233 շունչ, 94% վրացաբնակ), **Ղոեսը** (Կասպի շրջ., 2818 շունչ, 98% վրացաբնակ), **Ատոցը** (Քարելի շրջ., 311 շունչ, 99% վրացաբնակ), **Դիրբը** (Քարելի շրջ., 3028 շունչ, 99% վրացաբնակ), **Ռուխը** (Քարելի շրջ., 6032 շունչ, 99% վրացաբնակ), **Ալը** (Խաշուրի շրջ., 1375 շունչ, 99% վրացաբնակ), **Վաղան** (Խաշուրի շրջ., 1423 շունչ, 99% վրացաբնակ) և մի շարք գյուղեր ու ավաններ³⁰⁰: Թվարկված և չթվարկված երբեմնի վիրախոս հայաբնակ գյուղերը, ինչպես տեսնում ենք, ներկայումս բավական խոշոր վրացական գյուղեր են, որից ենթադրելի է գործառնության աճման բավական խոշոր տեմպը. այն եղել է դարասկզբի աճման ընթացքին համահունչ: Հավելենք նաև, որ Վրաստանի այլ շրջանների և Գորիի նախկին գավառի ինչպես էթնոձուլման գործընթացն ապրած, այնպես էլ պաշտոնական վիճակագրությամբ ներկա-

²⁹⁸ saqarTvelos statistikis saxelmwipo departamenti, saqarTvelos mosaxleobis 2002 wlis pirveli erovnuli sayovelTao aRweris ZiriTadi Sedegebi (saqarTvelos soflebis mosaxleoba), tomi II, Tbilisi, 2003 weli.

²⁹⁹ Շուրջ 76 գյուղ ամբողջությամբ կամ մասամբ օսաբնակ է:

³⁰⁰ saqarTvelos statistikis saxelmwipo departamenti, saqarTvelos mosaxleobis 2002 wlis pirveli erovnuli sayovelTao aRweris ZiriTadi Sedegebi (saqarTvelos soflebis mosaxleoba), tomi II, Tbilisi, 2003 weli, gv. 220-240.

յացվող փոքրաթիվ հայության ներկա վիճակի բազմակողմանի ուսումնասիրությունը՝ մի շարք մասնագետների (էթնոհոգեբաններ, սոցիոլոգներ, դաշտային հետազոտողներ և այլն) մասնակցությամբ, առանձին ուսումնասիրման դաշտ է:

Զննելով 2002թ. պաշտոնական վիճակագրությունը՝ պարզ նկատվում է մուսուլման տարրի, հատկապես ադրբեջանական զանգվածի առկայություն, սա՝ այն դեպքում, երբ, ինչպես վկայում են մեր կողմից վկայակոչված, XIXդ. վերջի և XXդ. սկզբի ժողովրդագրական պատկերը ներկայացնող աղբյուրները, այդ զանգվածն իսպառ բացակայում էր Գորիի գավառում: Օրինակ, 1886թ. Անդրկովկասի բնակչության ընտանեկան ցուցակներից քաղված վիճակագրական տվյալների ժողովածուի ազգությունների աղյուսակում թուրքերն ընդհանրապես բացակայում են, իսկ թաթարներ Գորի քաղաքում հիշատակվում են 2 անձ, գավառում՝ 3 ծուխ (17 անձ), նույն աղբյուրի կրոնական հետևորդների բաժնում ևս Գորիի գավառում (քաղաքով հանդերձ) հիշատակվում են ընդամենը 10 մուսուլման սուննիներ և 17 մուսուլման շիաներ: Իսկ ահա Վրաստանի 2002թ. մարդահամարի տվյալներով՝ Գորիի, Կասպի, Քառելի և Խաշուրի շրջաններում, միասին վերցրած, ադրբեջանցիների թիվը հասնում է 5768-ի կամ ամբողջ նահանգի բնակչության 1,84%-ը: Շրջանների մի շարք գյուղեր ամբողջովին կամ մասամբ բնակեցված են ադրբեջանցիներով՝ **Լևիտանա** (Գորիի շրջ., 290 շունչ, ամբողջությամբ), **Թեղոծմինդա** (Գորիի շրջ., 541 շունչ, կիսով չափ), **Սաքաղագիանո** (Կասպի շրջ., 1095 շունչ, 62%), **Խիդիսդուռի** (Կասպի շրջ., 899 շունչ, ամբողջությամբ), **Ախալստփեկ** (Կասպի շրջ., 105 շունչ, 35%), **Կալուբանի** (Կասպի շրջ., 140 շունչ, 39%), **Ֆերմա** (Կասպի շրջ., 1025 շունչ, 87%), **Չանգիլարի** (Կասպի շրջ., 300 շունչ, ամբողջությամբ)³⁰¹:

³⁰¹ Նույն տեղում:

Որոշ հետևություններ

Գործիահայության պատմությունն իր պատմափուլերով օրինաչափորեն հար և նման է հայկական մի շարք գաղթօջախների անցած ուղուն. հիմնավորում, ազգային, մշակութային, կրոնական, հասարակական-քաղաքական կյանքի կազմակերպում, պայքար օտարախոսության, օտարացման, ուժացման և սեփական տեսակի վերացման դեմ և, ի վերջո, պարտություն և անհետացում պատմության ասպարեզից: Ինչո՞ւ օրինաչափորեն, քանի որ հիմնականում այդպիսին է Հայրենիքից դուրս դեգերող յուրաքանչյուր ազգի բնական ընթացքը, և գաղթօջախներում տարբեր ժամանակներում պայքարող հայ մտավորականությունն ինչքան էլ ջանք թափեր, կարող էր ընդամենն այս կամ այն չափով երկարացնել սեփական ազգի կյանքը, բայց փրկել այն մահվանից ի գորու է միայն Հայրենիքը: Գործիահայ մտավորականությունը XX դարասկզբին մի վերջին հեքով փորձեց կյանք հաղորդել օրավուր անհետացող սեփական ժողովրդին: Ցավոք, դա վերջինիս կարապի երգն էր:

Ներկայացնելով այս իրադարձությունները՝ մեր նպատակը միայն մի հայկական գաղթօջախի պատմությանն անդրադառնալը չէր: Ի ցույց դնելով վրաց միջավայրում տեղի ունեցող քարթվելացման, միաեթնիկ հանրություն ձևավորելու (մոնոէթնիզացիա), ոչ քարթվելական ժողովուրդներին կլանելու էթնոձուլման գործընթացը՝ փաստենք, որ այսօր ևս այն չի ավարտվել: Ավելին, չունենալով բնական աճման բարձր տեմպեր, սեփական շարունակականությունը դարերով ապահովելով այլ ժողովուրդներին կլանելու միջոցով և այսօր սպառած լինելով կենսատու ժողովուրդների պաշարը (չափազանց նվազել կամ երկրից գրեթե վերացել են հույները, հրեաները, ռուսները, օսերը, արխագները և այլն)՝ քարթվելական միջավայրն այսօր կանգնած է ծանրագույն խնդրի առաջ: Իսկ այդ խնդրի ժամանակավոր լուծման միակ ճանապարհը վրաց աշխարհիկ և հոգևոր վեր-

նախավը տեսնում է շուրջ 150.000 ջավախահայությանը (Ախալցխայից մինչև Ծավկայի շրջաններ) ներքաշելու քարթվելացման գործընթացի մեջ: Այդ իրողությունն ավելի ուրվագծվեց վերջին տարիներին, երբ, ինչ-որ տեղ հզորանալով, վրացական կողմը գործի դրեց պետական, կրոնական, կրթական, մշակութային, տնտեսական ողջ զինանոցը: Այստեղից պարզորոշ է, թե ինչու է Վրաստանում, ի տարբերություն աշխարհի բոլոր պետությունների, արգելված հայկական գրքի ներմուծումը, քանի որ, կրկին ի տարբերություն աշխարհի բոլոր պետությունների, Վրաստանում այլ ժողովուրդների ուժացման գործընթացը տեղի է ունենում ոչ թե բնական, այլ բռնի, արհեստական ճանապարհով:

Հպանցիկ հայացք նետելով ներկա Վրաստանի տարբեր վայրերում տեղի ունեցած հայության ուժացման գործընթացներին՝ նշենք, որ ջավախահայությունն այդ ամենի վերջին օղակն է, իսկ առկա դիմադրողականությունը պայմանավորված է ջավախահայության՝ որպես բնիկ ժողովուրդ հանդիսանալով³⁰² և խորհրդային շրջանում ձևավորված հայկական կրթական միջավայրի ազդեցությամբ³⁰³: Կերկնվի՞ Ջավախքում գործահայության դառը պատմությունը, թե՞ կլինեն այլ զարգացումներ³⁰⁴՝ կախված է մի շարք հանգամանքներից, այդ թվում՝ այս հիմնահարցի հանդեպ մայր պետության՝ ՀՀ-ի ցուցաբերած այս կամ այն դրսևորումներից:

³⁰² Ջավախահայությունն ապրում է հայության բնօրրան Հայկական լեռնաշխարհի տարածքում, Մեծ Հայքի Գուգարք նահանգի մի քանի գավառների վրա:

³⁰³ Այդպիսի միջավայր առկա էր նաև Թիֆլիսում, որի վերացումով այսօր թիֆլիսահայության շրջանակներում ևս լայն թափ են ստացել ուժացման գործընթացները:


³⁰⁴ Առկա տարածաշրջանային զարգացումների շարունակական լինելու պարագայում՝ մենք ավելի հակված ենք կարծելու, որ Ջավախքն ապագայում կունենա այն տեսքը, ինչը ստացավ Հյուսիսային Լոռին կամ ներկա Վրաստանի կազմում ձևավորված Քվեմո (Ներքին) Քարթլի նահանգը: Այսինքն՝ Ջավախքը կվերածվի տարածաշրջանի, որտեղ թուլացած կամ վերացող հայկական գործոնն արագ փոխարինված կլինի ադրբեջանական (Ջավախքի պարագայում՝ նաև թուրքական) գերակա տարրով:

Քարտեզներ

Թիֆլիսի նահանգ



Թիֆլիսի նահանգ




Թֆիլիսի նահանգ




Քութայիսի նահանգ








ПЕЩЕРА ВЪ УПЛИСЬ-ЦИХЕ.



ПЕЩЕРА ВЪ УПЛИСЬ-ЦИХЕ СЪ ВИДОМЪ НА Р. КУРУ.

ПЛАНЪ
ЗАЛЫ
ЦАРИЦЫ ТАМАРЫ
ВЪ УПЛИСЬ-ЦИХЕ.



Հուշագիր հեղինակին

«Գլոբուս» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ՝ նվիրված Հայաստանի և Հայության ռազմաքաղաքական, տեղեկատվական և վերջինիս մեջ ընդգրկված քաղաքակրթական ու հոգևոր անվտանգության խնդիրներին, հայկական համայնքների և տարալեզու-տարադավան հայերի կազմակերպչական անվտանգության հիմնահարցերին:

«Գլոբուս» ամսագրի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «Գլոբուս» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen*» տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 7 էջը:
2. Առաջին անգամ հոդված ներկայացնելիս պարտադիր կցել հեղինակի ինքնակենսագրությունը (*CV*):
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև հեռավորությունը՝ 1.5:
4. Ինտերնետային աղբյուրների հղումները նշել տողատակում:

Խմբագրություն

«ԳԼՈՒԲՈՒՄ» ամսագիր
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆԿ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեզիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ globus@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 29.10.2013թ.
Թիվ 10 (43), 2013թ.
Տպաքանակը՝ 200:

Ֆորմատը՝ 70x100 1/16: Պայմանական 3 մամուլ:
Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում: